Գիրքս չի պրկանց

Թիւ 2
ՆՈՐ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

329.14
Գ-67

Ա. ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅՈՒՀԻՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ



ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՓԱՐԻԶ
1939

A $\frac{\text{II}}{10236}$

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հակառակ նորա, որ երկար դարեր մենք շփումներ ենք ունեցել եւ յաճախ ենթարկուել ենք մահմետական ժողովրդների լծին, թէպէտ այդ մահմետական ժողովրդները որոշ ազդեցութիւն են ունեցել մեր մասնաւորապէս եւ կենցաղի վերայ, այնու ամենայնիւ նրանք երբեք չեն կարողացել փոխել հայ մարդու վերաբերմունքը դէպի հայ կինը:

Հայ կինը երբեք չի ստրկացել ինչպէս այդ մենք տեսնում ենք մահմետական աշխարհում, հայ օճախը միշտ մնացել է մի սրբութիւն, ուր հայ կինը, համարեա համահաւասար իրաւունքներ է վայելել հայ մարդու հետ միասին:

Շնորհիւ այդ դրութեան, հայ կինը, երբ պայմանները ներել են, միշտ հնարաւորութիւն է ունեցել դուրս գալ ասպարէզ եւ լծուել հայ հանրային աշխատանքների հայ մարդու հետ միասին:

Հայ մշակութային ասպարէզում հայ կինը, մանաւանդ անցեալ դարու երկրորդ կէսերից սկսած, բերել է իր անգնահատելի մասնակցութիւնը, գրական ասպարէզում հայ կինը ունեցաւ եւ ունի իր փայլուն ներկայացուցիչները, կրթական ասպարէզում զարմանալի մեծ է եղել նրա դերը, հայ տղամարդու

կողմին, զուցէ նրան համահաւասար կերպով, տարել է հայ մատաղ սերնդի դաստիարակութեան գործը:

Մեր ազատագրական պայքարի մէջ եւս հայ կինը ունի իր պատուաւոր տեղը:

Դեռ եւս մեր շարժումների արշալոյսին հայ կինը իր գոյութիւնը զգացնել էր տալիս: Ճիշդ է, սկզբնական շրջանում յանախ նրա մասնակցութիւնը արտայայտւում էր գթութեան ասպարէզում, որը յատուկ էր իր սեռին, սակայն աստիճանաբար նա կլանուեց եւ իրական յեղափոխական գործունէութեամբ: Նա թեւ ու թիկունք դարձաւ հայ տղամարդուն, նրա հետ միասին պայքարեց, զոհեց եւ զոհուեց, կամաւոր կերպով կրեց բոլոր տեսակի զրկանքներ, տանջանքներ եւ դառնութիւններ:

Առանց բաշուելու կարելի է ասել, որ եթէ հայ կնոջ մասնակցութիւնը չլինէր, շատ դէպքեր մեր հանրային կեանքի մէջ կամ չէին կատարուի եւ կամ անփառունակ վախճան կարող էին ունենալ:

1896 – 98 թուականներին ցարական կառավարութեան հրամանով փակուեցին կովկասահայ բոլոր դպրոցները, հայ լեզուն մոռացնել տալու համար հայ մանուկին: Հայ կինը ոչ միայն իր եղբայրների հետ միասին պայքարեց այդ բռնութեան դէմ այլ եւ իր տունը դպրոց դարձրեց եւ հայ մատաղ սերնդի սրտի ու հոգու մէջ վառ պահեց հայ լեզուն, այնպէս որ, փակուած մի քանի հարիւր դպրոցների տեղ, ստեղծուեցին տասնեակ հազար նոր դպրոցներ, որոնց դէմ անզօր էին պայքարելու կօզակները իրենց մտրակներով եւ ցարական ոստիկանութիւնը իր բազմատեսակ դաւերով...:

1903 թուականին ցարի կառավարութիւնը որոշեց գրաւել հայ եկեղեցական կալուածները, միաժամանակ դրամական նպաստներ սահմանելով հայ բարձր հոգեւորականութեան:

Համակերպելու նշաններ էին երեւում եւ ահա *մի քանի տասնեակ հազար հայ կանայք*, գլխաւորապէս էջմիածնի գաւառից, մի մարդու նման, եկան լցեցին էջմիածնի վանքի բակը եւ պահանջեցին, որ ծերունազարդ վեհափառը զգաստանայ եւ երբեք չը գիջէ ցարի կառավարութեան ... : Եթէ իրենց դրամ է պէտք, իրենք պատրաստ են իրենց բոլոր զարդարանքները յանձնել Կաթողիկոսին ... :

1905 թուականին էր, երբ մեր հարեւան թաթարները, քաջալերուած ցարական կառավարութեան դաւերով, ուզի ելան եւ բնաջնջել էին ցանկանում Կովկասահայութիւնը :

Հայ կինը չուզեց մենակ թողնել հայ մարդուն եւ ասպարէզ ելաւ աջակցելու համար նրան :

Հայ կինը ոչ միայն խնամում, խրախուսում էր հայ մարտիկներին այլ եւ օրերով, շաբաթներով նահապարի էր կտրում եւ գաղնի միջոցներով զէնք էր հասցնում նրանց, իրենց դիմադրութիւնը քաջաբար շարունակելու համար :

Տանկաստանում ոչ մի քայլ ոչ մի աշխատանք չէր կարող կատարել հայ փեղային եւ յեղափոխական գործիչը, եթէ հայ կինը իր կեանքի գնով յանձն չառնէր անսահման զոհաբերութիւն եւ տանջանք, պաշտպանելու համար յեղափոխականների կեանքը ...

Հարիւրաւոր են եղել այդպիսիները, որոնք լռիկ մնջիկ, անվախ եւ անտրտունջ պահել, պաշտպանել, խնամել եւ անքուն գիշերներով հսկել են, որ մի չար աչք, մի չար ոտք ներս չը թափանցէ գործիչների թագստոցները. սուրհանդակների դեր են կատարել, զէնքեր են փոխադրել եւ այդ բոլորը այնպիսի դժոխային պայմանների մէջ, երբ ամէն քայլափոխում կարող էին զոհ տալ իրենց եւ իրենց ամբողջ ընտանիքի կեանքը ... :

Անշուշտ անհնար է վերականգնել բոլոր այն աշխատանքները, որոնք կատարել են հայ կանայք մեր յեղափոխական շարժումների ժամանակ: Ինչպէս հազարաւոր հայ մարդկանց աշխատանքները մնացել են անյայտ, այնպէս էլ բազմահարիւր կանայք են եղել, որոնց աշխատանքները պիտի մնան անյայտ, որովհետեւ մեր շարժումները կրել են զանգւածային բնոյթ եւ ամէն մէկը, ինչ որ հնարաւորութիւն է ունեցել, կատարել է:

Մեր այս աշխատանքի նպատակն է եղել տեւական յեղափոխական աշխատանքներ կատարող կանանց մասին եղած տեղեկութիւնները ամփոփել միատեղ, ցոյց տալու համար, թէ կանայք եւս իրենց կարեւոր բաժինն են ունեցել մեր շարժումների մէջ: Այս գործին մենք կարեւորութիւն ենք տալիս ոչ միայն պատմական այլ եւ դաստիարակչական տեսակէտից: Նոր սերնդի համար ոգեւորութեան աղբիւր եւ աշխատանքի ուղեցոյց պիտի լինի ինչ որ կատարել են մեր մայրերն ու քոյրերը...

Երկար փնտռտուքներ ենք կատարել, ցանկանալով բոլոր կարեւոր աշխատողների մասին մի երկու խօսք ասել, սակայն հաւանօրէն մնացել են շատերը անյայտ. որովհետեւ յեղափոխական գործում, շնորհիւ խիստ գաղտնապահութեան, շատերի դէմքը, կեանքը եւ անունը անյայտ է մնացել: Յոյս ունենք, որ այս աշխատանքը խթան կարող է հանդիսանալ եւ դեռ եւս կենդանի մնացած ընկերները կը վերյիշեն եւ երեւան կը բերեն այդպիսիներին:

Ներկայ աշխատանքը նպատակայարմար ենք համարել հասցնել մինչեւ ընդհանուր պատերազմ: Ընդհանուր պատերազմի ինչպէս եւ տարագրութեան ժամանակ տեղի ունեցած դէպքերը մեր այս նիւթից դուրս թողե-

ցինք։ գուցէ յաջողուի մեզ մի առանձին հատոր նուիրել ապագայում։

Ներկայ աշխատանքը կազմելու ժամանակ մենք օգտուել ենք Հ. Յ. Դ. կենտ. արշիւի որոշ նիւթերից, *Հայրենիք* ամսագրում լոյս տեսած մեր ուսումնասիրութիւններից, Ռուբէնի եւ Ռուբէն խան-Ազատեանի յուշերից, *Յուսաբեր*ում լոյս տեսած Սամսոնի յուշերից։ Բացի այդ նպաստել են մեր այս գործին իրենց տեղեկութիւններով Տիկիններ Ռուբինա Օհանջանեան եւ Գարդինէ Աղաբաբեան, ինչպէս նաեւ Պ. Պ. Լեւոն Գեւոնեանը, Ռ. Բէրբէրեանը, Եր. Յարութիւնեանը, Մ. Բարխեանը, Մ. Մուրադեանը, Վահան Փափազեանը, որոնց յայտնում ենք մեր շնորհակալութիւնները։

Զանազան պատճառներով նպատակայարմար համարեցինք այս նիւթը բաժանել երկու մասի. անցեալ դարու ութսունական թւականների ինչպէս եւ Դաշնակցութեան սկզբնական շրջանի գործչուհիներին ամփոփեցինք առաջին մասի մէջ, իսկ երկրորդ մասի նիւթը պէտք է լինի Վասպուրականի, Տաւրոսի, Տրապիզոնի, Կ. Պոլսոյ ինչպէս եւ Անդրկովկասի շրջաններում աշխատող յեղափոխական կանանց մասին։

Դժբախտաբար հակառակ մեր ջանքերին մեզ չը յաջողեց ձեռք բերել բոլորի նկարները, ստիպւած բաւականացանք եղածներով։

Ա. ԴԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ

■

ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՅԵՂԱՓԱԽԱԿԱՆ ԿԻՆԸ

ԹԱՄԱՐԱ ԱԴԱՄԵԱՆ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

Անցեալ դարու եօթանասնական թուականներին Ռուսաստանում տեղի ունեցած յեղափոխական շարժումների ալիքները հասել էին եւ Անդրկովկասի մայրաքաղաք Թիֆլիսը։

Նարոդնայա Վոլեա (Ժողովրդական Կամք) կոչուած ռուսական յեղափոխական կուսակցութիւնը, որ այդ ժամանակները գոնուում էր իր վերելքի շրջանի մէջ եւ տիրաբար ու միահեծան կերպով իշխում էր դրեթէ ամբողջ ռուսական երիտասարդ մտաւորականների մտքի վերայ, աչքաթող չէր արել եւ Անդրկովկասի շրջանը։ այստեղ եւս յաճախ հանդիպում էին ռուս յեղափոխական գործիչները՝ իրենց խօսքով եւ գաղտնի գրականութեամբ վարակելու համար Անդրկովկասի զգայուն երիտասարդ մտաւորականութեան։

Եօթանասնական թուականների վերջերին եւ ութսունական թուականների սկիզբները Անդրկովկասի բազմացեղ եւ բազմալեզու ժողովրդներից միայն հայերն ու վրացիներն էին, որ միջնակարգ եւ բարձրագոյն կրթութեամբ բաւական թիւով երիտասարդներ ունէին, որոնցից շատերը մեծ հետաքրքրութեամբ եւ ոգեւորութեամբ գաղտնի ժողովներում կլանում էին Ռուսաստանի մայրաքաղաքից ստացուած հակապետական գրակա-

նութիւնը եւ յեղափոխական գործիչների ամէն մի խօսքը։

Այս բոլոր երիտասարդները ըստ վկայութեան Գր. Միքայէլեանի *) գրաւուած էին միջազգային սոցիալիզմի խոհերով, դրանց համար անջատ ազգային քաղաքական բնոյթ կրող հարցեր գոյութիւն չունէին։ Ռուսը, վրացին, հայը հոգիով միացած էին մի աշխարհաքաղաքական գաղափարով, ընդունում էին մի նպատակ եւ կուի մի միջոց ռուսական ցարիզմը ոչնչացնելու համար. որովհետեւ բոլոր ժողովրդների թշուառութեան աղբիւրը համարում էին ցարական կարգերի գոյութիւնը։

1880 թուականին Թիֆլիսի մէջ այնքան էին բազմացել այդ յեղափոխական գաղտնի խմբակները, որ «Ժողովրդական Կամք» կուսակցութեան ղեկավարներից մէկը, Պետերբուրգի ներկայացուցիչ Գօրօդեսը, անհրաժեշտ համարեց Թիֆլիսի մէջ կազմել մի ղեկավար մարմին վեց հոգուց բաղկացած, որոնցից երեքը հայեր էին եւ երեքը վրացի։ Հայերից մէկը օրիորդ Թամարա Աղամեանն էր, որ այդ ժամանակ ռուսական Օրիորդական Գիմնազիայի (Լիցէ) վերջին դասարանի աշակերտուհի էր, հետեւապէս հաղիւ 18–19 տարեկան լինէր։

Թամարային ժամանակակից Տիգրան Փիրումեանը *) թէեւ մեծ ժլատութեամբ է խօսում Թամարայի մասին, այնուամենայնիւ նրա տուած հակիրճ տեղեկութիւններից պարզւում է, Թամարայի բնաւորութեան խոշոր գծերը. նա վերին աստիճանի կենսուրախ, շատ

---

*) Գր. Միքայէլեան՝ «Բեկորներ իմ յուշերից», Հայրենիք ամսագիր, օգոստոս, 1924 թ.։

*) Տես Տիգրան Փիրումեան, «Չորս տարի Վանում» յօդուածը Թիֆլիսի Հորիզոն, 1916 թ.։

համակրելի, համարձակ, վճռական բնաւորութիւն ունէր, ուժեղ նախաձեռնութեամբ եւ վարակիչ եռանդով մի աղջիկ էր:

Թիֆլիսի այդ նորակազմ յեղափոխական մարմինը ոչ միայն պիտի ղեկավարէր զոյութիւն ունեցող դաշտնի խմբակները եւ աւելացնէր նրանց թիւը, այլ եւ կապ պիտի պահպանէր Պետերբուրգի եւ Մոսկվայի յեղափոխական կոմիտէի հետ, որ այն ժամանակները չափազանց դժուարին գործ էր համարւում: Պէտք է ասենք դաշտնի գրականութիւն եւ ցրէր այդ բոլորը խմբակների եւ համակիր անձնաւորութիւնների մէջ իսկ անհրաժեշտ պարագաներում պէտք է թաղցնէր յեղափոխական գործիչներին, որոնց ցարական լրտեսները որսկան շների նման փնտռում էին անդադար:

Այս մարմնի գործը աւելի եւս դժուարացաւ մանաւանդ 1881 թուականի մարտ ամսից յետոյ, երբ յեղափոխականների ռումբով ընկաւ Ալէքսանդր Բ. կայսրը եւ նորան փոխարինեց Ալէքսանդր Գ., որի արքունականները մեծ դաժանութեամբ սկսեցին հալածել ոչ միայն իրական յեղափոխականներին, այլ եւ խեղդել ամէն մի ազատ խօսք, մտքի ամենափոքրիկ թռիչք:

Այդպիսի մի ժամանակ էր, երբ Թամարան մեծ անձնազոհութեամբ եւ նուիրումով տարաւ իր վերայ դրած բոլոր պարտականութիւնները, զոհ ճգելով եւ հիացմունք պատճառելով բոլոր իր ընկերներին եւ դաղափարակիցներին:

***

Նոյն այդ ժամանակները Թիֆլիսում բացառապէս հայերի շրջանում տեղի էին ունենում բոլորովին այլ բնոյթ կրող մտքերի խմորումներ եւ շարժումներ:

1877–78 թուականների ռուս-տաճկական պատերազմի հետեւանք եղող Ս. Ստեֆանոյի 16րդ եւ Բերլինի

գաշնադրերի 61դ յօդուածները խորունկ ազդեցութիւն էին թողել հայ հասարակութեան վերայ։ Նոր յոյսերի եւ նոր ակնկալութիւնների անսպառ աղբիւր էին հանդիսանում այդ յօդուածները. հայ հրապարակախօսութիւնը սկսել էր շարժուել նոր թափով, Բաֆֆին, Գամառ Քաթիպան իրենց գրչով գերել էին հայ երիտասարդութեան միտքը, վերազարթել էր հայութիւնը եւ մեծ ոգեւորութեամբ հաւատում էր իր հայրենիքի ազատութեան։ Հրապարակ էին եկել երիտասարդ գաղափարական նոր ուժեր, որոնք փորձում էին անցնել Տաճկահայաստան նուիրուելու համար հայ ժողովրդի ազատութեան գործին...

Բնական է, որ այդպիսի մի շարժում, որ գրաւել էր սկսել հայութեան միտքը եւ օրէցօր աւելի եւ աւելի ուժեղանում էր, պէտք է ազդէր արդէն գոյութիւն ունեցող յեղափոխական խմբակների, մանաւանդ նրանց հայ անդամների վերայ, որքան էլ նրանք գրաւուած լինէին միջազգային սոցիալիզմի իդեալներով եւ որքան էլ նրանք չը կամենային զբաղուել անջատ ազգային քաղաքական խնդիրներով։

Այդպէս էլ եղաւ։

Քրիստափոր Միքայէլեանը, որ դեռ եւս Թիֆլիսի ուսուցչական ճեմարանի աշակերտ եղած ժամանակ ռուսական յեղափոխական խմբակների մէջ աշխատողներից էր, ութսունական թուականների սկիզբները ուսուցչական պաշտօնով անցել էր գաւառ։ Գաւառում շփուելով հայ ժողովրդի հետ եկել էր այն տխուր եզրակացութեան, որ գաւառներում ապրող եւ իրապէս կեղեքւող հայութիւնը միանգամայն աչքաթող է արուած եւ օր ըստ օրէ ծանրանում է գաւառի հայութեան ինչպէս եւ միւս ժողովրդների վիճակը, հետեւապէս Թիֆ-

լիսում գոյութիւն ունեցող յեղափոխական զեկավար մարմինը չը պէտք է կլանուի միայն միջազգային սոցիալիզմի գաղափարներով այլ պարտական է զբաղուելու նաեւ տեղական այժմէականութիւն ունեցող խնդիրներով: Այդ ուղղութեամբ Քրիստափորը առիթ է ունենում խօսելու Թիֆլիսի զեկավար ընկերների հետ:

Նոյն այդ ժամանակները Թիֆլիզում էր գտնուում Գալուստ Տէր Մկրտչեանը *), որը համակրելով հանդերձ Թիֆլիսի յեղափոխական խմբակի զեկավար անդամների գաղափարներին, այնուամենայնիւ նրանց ուշադրութիւնն է հրաւիրում հայութեան մէջ գոյութիւն ունեցող նոր շարժումների վերայ, եւ առաջարկում է փոխել իրենց գործելակերպը: Այսպիսով մի կողմից հայութեան մէջ ծայր տուած շարժումները, միւս կողմից Քրիստափոր Միքայէլեանի նամանաւանդ Գալուստ Տէր-Մկրտչեանի միջամտութիւնները ստիպում են հայ զեկավարներին վերադնահատութեան ենթարկելու իրենց քաղաքական վարքագիծը: Թէեւ սկզբի շրջանում թէ՛ հայերը եւ թէ՛ վրացիները աննպատակայարմար էին գտնում իրենց ունեցած խառն խմբերը վերածելու անջատ անջատ ազգային խմբակցութիւնների, սակայն 1882 թուին այնքան է հասունանում այդ միտքը, որ թէ՛ հայերը եւ թէ վրացիները անհրաժեշտ են համարում կատարել այդ անջատումը: Այդ որոշումից յետոյ բաժանուում են Թիֆլիսի յեղափոխական խմբակները երկու

---

*) Գալուստ Տէր-Մկրտչեանը Էջմիածնի Ճեմարանի սաներից էր. բարձրագոյն կրթութիւնն ստացել էր արտասահմանում. հետագային կուսակրօն դարձաւ եւ երկար տարիներ զբաղուել է Էջմիածնում հայ մատենագրութեան ուսումնասիրութեամբ. յայտնի էր «Միաբան» անունով:

ազգային անջատ մասերի, բաժանւում են եւ ղեկավար մարմնի անդամները: Այսպիսով առաջին անգամ լինելով 1882 թւին Թիֆլիզում կազմւում է առաջին հայկական յեղափոխական մարմինը, որի մէջ է լինում եւ Թամարա Աղամեանը: Այդ մարմինը որոշում է «ամբողջովին նւիրւել հայ ժողովրդի անպաշտպան շահերին», ինչպէս դրում է այդ մասին մարմնի անդամներից մէկը Բրխատարոր Միքայէլեանին:

Այդ ղեկավար մարմինը, հրաւիրելով նոր ուժեր, նւիրւում է ամբողջապէս հայ երիտասարդութեան յեղափոխական դաստիարակման գործին:

Այժմ խմբակների մէջ պարապմունքները ընթանում են ոչ թէ առաջուայ նման ռուսերէն լեզւով, այլ հայերէն: Հայ գրականութիւն, հայոց պատմութիւն, տաճկահայ գաւառ եւ առհասարակ հայ կեանքին վերաբերեալ խնդիրներն էին, որ արծարծւել սկսւեցին նորակազմ խմբակների մէջ: Միաժամանակ անհրաժեշտ է համարւում բացի մտաւորականներից իջնել աւելի հասարակ դասի, մանաւանդ տաճկահայ երիտասարդ աշխատաւորների մէջ, որոնց թիւը այդ ժամանակները բաւական խոշոր էր Թիֆլիզում,

Թիֆլիզի հեռու թաղերից մէկում Թամարայի ծրնողները ունէին 7–8 սենեակից բաղկացած մի ընդարձակ տուն իր պարտեզով, որը տրամադրւել էր ձրիապէս մշեցի բանուորներին: Այդ տունը աստիճանաբար դարձաւ մի տեսակ կեդրոնատեղի բոլոր տարադիր տաճկահայերի համար, ուր համախմբւում էին թէ հին եւ թէ նոր Երկրէն եկած տաճկահայ երիտասարդները:

Յեղափոխական գործիչները կանոնաւորապէս յաճախում էին այդ տունը եւ այդ տեղ համախմբւած բանուորներին տարբերական դիտելիքներ տալուց դատ, դաստիարակում էին յեղափոխական ոգով:

Այս խմբակներին անդամակցել են իրենց հերոսական գործերով յայտնի Աբաբոն, Մարդար Վարժապետը, Վայդենեսցի, քաւոր Պետրոսը եւ ուրիշներ:

Նորակազմ խմբերին բաւարարելու համար ղեկավար մարմինը հրապարակ էր հանում զանազան խմորատիպ թռուցիկներ, նուիրուած բացառապէս հայ դատին: Զը բաւականանալով դրանով՝ մարմինը հրատարակել սկսեց դարձեալ խմորատիպ «Մունետիկ» անունով մի թերթ, որին մասնակցում էր եւ Ա. Շիրվանզադէն իրրեւ լաւ հայերէն խմացող, որ այդ ժամանակ արդէն հայ մամուլի մէջ երեւան էր եկել եւ, իրր սկսնակ դրագէտ, որոշ անուն ունէր:

Այս մարմնի անդամների առջեւ դրուած էր եւ մի նոր խնդիր. սրանք արդէն դիտակցում էին, որ տաճկահայութեան ազատագրումը կարող է կատարուել միայն զէնքի ուժով, որ բոլոր դաղտնարական խմբակների անդամները ինչպէս եւ ղեկավարները առանց բացառութեան պէտք անցնէին երկիր, մասնակից լինելու համար ապագայ յեղափոխական շարժումներին, հետեւապէս ամէնքն էլ պարտական էին լաւ զինուորուած լինելու: Այդ էր պատճառը որ խմբական պարտականների հետ դուզընթացաբար խմբերի անդամներին սովորեցնում էին զինուորութիւն:

Խմբերը, չը բաւականանալով բնակարանների մէջ կատարուած զինուորութեամբ, տօն օրերին դուրս էին գալիս Թիֆլիզ քաղաքից դուրս եւ, զդուշաւոր Լերպով համախմբուելով Մթամտինդա կոչուած սարի մօտերքը, հեռու հետաքրքիր աչքերից եւ ոստիկանութիւնից, զբաղւում էին զինուորութեամբ:

Թամարան թէեւ պատկանում էր քնքուշ սեռին, սակայն լաւ դիտակցելով իր ապագայ գործունէութեան համար զինուորութեան անհրաժեշտութիւնը, ո՛չ

միայն քաջալերել մասնակցում էր խմբական այդ ձեւի աշխատանքներին, այլ եւ առաջնակարգ զինավարժներից մէկն էր դարձել:

Այս մարմնի ջանքերով էր, որ 1883 թուին Տաճկահայաստան անցան Ալեքսանդր Պետրոսեանը (Սանդալ), Տիգրան Փիրումեանը, Հայկ Մելիք-Դաղայեանը եւ Արսէն Թոխմախեանը:

1883 թուի աշնանը զեկավար մարմնի համաձայն բոլոր անդամները, որոնք կամ նոր էին աւարտել միջնակարգ դպրոցը եւ կամ համալսարանական ուսանող էին, որոշում են անցնել Մոսկվա՝ իրենց ուսումը շարունակելու համար Մոսկայի համալսարանում: Թամարան եւս, որ աւարտել էր արդէն Գիմնազիան (լիցէյը), անբաւարար գտնելով յեղափոխական գործի համար իր ստացած կրթութիւնը, որոշում է անցնել Մոսկվա եւ այնտեղի համալսարանը աւարտելուց յետոյ՝ ամբողջապէս նուիրել իր սիրած յեղափոխական գործին:

Աւելորդ է ասել, որ թէ այն ժամանակները մեծ դժուարութիւններ կային կանանց համալսարան մտնելու համար, ռուս կառավարութիւնը ոչ միայն չէր քաջալերում կանանց այդ շարժումը այլ եւ որոշ խոչընդոտներ էր յարուցանում, բացի այդ հայ իրականութեան մէջ միանգամայն անսովոր երեւոյթ էր, որ աղջիկը բաժանուէր իր հայրենական տնից եւ երթար ապրելու հեռու քաղաքներում կրթութեան համար:

Այնուամենայնիւ Թամարան կարողանում է այդ բոլոր դժուարութիւնները եւ նախապաշարումները յաղթել, եւ 1883 թուի աշնանը գնում է Մոսկվա, ուր եւ մտնում է համալսարան:

Մօտաւորապէս այն ժամանակները, երբ Թիֆլիզում տեղի ունեցաւ հայկական յեղափոխական մարմնի կազմակերպութիւնը, նոյն այդ ժամանակները Մոսկվայի

համալսարանական հայ ուսանողական շրջանում սկսել էր մի անսովոր եռուզեռ։ Կովկասի զանազան քաղաքներից այնտեղ հաւաքւած հայ ուսանողները ոչ միայն նուիրւած էին գիտութեան, այլ եւ պարտականութիւն էին համարում զբաղւելու ամբողջ հայութիւնը յուզող քաղաքական խնդիրներով։

Հակառակ Բեռլինի 61րդ յօդւածին գոյութեան, Տաճկահայաստանում ոչ մի բարենորոգութիւն տեղի չէր ունենում, ընդհակառակը օրէցօր աւելանում էին բռնութիւնները, թալանը եւ բարբարոսութիւնները, իսկ եւրոպական բոլոր այն պետութիւնները որ ստորագրել էին այդ յօդւածը միանդամայն անտարբեր կեցւածք ունէին եւ լռելեան կարծես քաջալերում էին տաճիկ կառավարութեան այդ ամարդի վարմունքը, իսկ հայ մտաւոր տարրը՝ պահպանողական թէ ազատամիտ, միակ միջոցը համարում էր յեղափոխութիւնը եւ զինեալ ապստամբութիւնը...

Ահա այդ ազդեցութեան տակ էր, որ Մոսկւայի գաղափարական հայ ուսանողութիւնը որոշում է կազմել «Հայրենասէրների Միութիւն» անունով մի ընկերութիւն, որը յատուկ պրոպագանդիստների միջոցով Ռուսաստանի, Անդրկովկասի եւ Տաճկահայաստանի երիտասարդ հայերին պիտի կազմակերպէր եւ պէտք է ունենար իր գաղտնի թերթը։

Եւ իրօք 1882 թւին սկսւում է հրատարակւել առաջին հայ յեղափոխական թերթը «Ազատութեան Այտաբեր» անունով։

Ահա այս գաղափարական ուսանողական խմբակին սկսեց անդամակցել Թամարան իր Մոսկւա գալուց անմիջապէս յետոյ եւ մասնակցեց նրանց բոլոր աշխատանքներին մի շարք տարիներ, ստանձնելով էլեդրոնական տեղ գրաւելով խմբակի մէջ։

Մոսկվայի համալսարանի ուսանողներից Ս. Տէր Գրիգորեանը, որ թէ՛ Թիֆլիզի եւ թէ՛ Մոսկվայի մէջ աշխատակցել էր Թամարային, պատմում էր, թէ Լրենց շրջանակի բոլոր ուսանողները մի առանձին պաշտամունք ունէին դէպի Թամարան եւ ամենամեծ սրբութեամբ ու անձնազոհութեամբ պատրաստ էին կատարելու նորա բոլոր հրահանգները:

Մոսկվայի Պետրովսկո-Ռազումովսկի գիւղատնտեսական ճեմարանի ուսանող էր այդ ժամանակ Դաւիթ Ներսիսեանը, որ աչքի ընկնող անձնաւորութիւն էր եւ իր ժամանակակիցների վկայութեամբ երկաթէ արամարանութիւն եւ արտակարգ կարողութիւններ ունէր, սրա հետ միասին վերին աստիճանի խոհուն, մտաւորապէս շատ պատրաստուած, եռանդուն եւ մաքուր երիտասարդ էր: Դաւիթ Ներսիսեանն էր, որ իրրեւ պրոպագանդիստ «Հայրենասէրների Միութեան» թռուցիկներ ցրեց Անդրկովկասի բոլոր հայաշատ քաղաքներում, յեղափոխական խմբեր կազմակերպեց եւ դրանց բոլորին կապեց Մոսկվայի հետ:

Դաւիթը եւ Թամարան միմիանց լաւ ճանաչում էին դեռ եւս Թիֆլիզից, ուր 1883 թ. եկել էր Դաւիթը յատկապէս յեղափոխական աշխատանքներ կատարելու համար, թողնելով իր համալսարանական պարտականները:

Մոսկվայում նրանց յարաբերութիւնները աւելի մտերիմ դարձան: Սիրահարուեցին եւ ամուսնացան:

Դժբախտաբար այդ ամուսնութիւնը երջանիկ վախճան չունեցաւ: Շուտով պարզուեց որ թոքախտի մանրէները բուն են դրել Դաւիթի կրծքի մէջ, եւ այդ եռանդուն անձնաւորութիւնը բժիշկների խորհրդով պիտի թողնէր դաժան հիւսիսը:

Եղաւ էջմիածնի ճեմարանում ուսուցիչ, յուսա-

A 10836

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ցով որ Արարատեան դաշտի տաք կլիման կ'ոչնչացնի մանրէները, բայց և զուր, Թոքախտը իր աւերումներն էր գործում:

Դաւիթը ստիպւած կտրւում է քաղաքական հասարակական կեանքից եւ անցնում է իր հայրենական օճախը, որ գտնւում էր Բաղէշ նահանգի Գէօքչայի գաւառի գիւղերից մէկում: Թամարան որ մեծ անձնազոհութեամբ խնամում էր իր ամուսնուն, յոյս ունէր, որ գիւղական խաղաղ մթնոլորտում ապրելով պիտի կարողանայ փրկել նորա կեանքը, բայց և զուր, 1888 թւականին մեռնում է Դաւիթը:

Թամարան, որ այնքան անձնուիրութեամբ խնամում էր իր ամուսնուն, վարակւում է Թոքախտով ինքը եւս եւ յաջորդ 1889 թւականին մեռնում է, իր սիրելի ամուսնու մահից ուղիղ մի տարի յետոյ:

Ահա այսպիսի տխուր վախճան է ունենում յեղափոխական առաջին հայուհին:

Թամարայի կրտսեր քոյրն էր տիկին Ժէնիա Քալանթարեանը, որ մեր արժէքաւոր ընկերներից էր, որի մասին մենք առիթ կ'ունենանք խօսելու:

Թամարայի երրորդ քոյրն էր հայ տաղանդաւոր դերասանուհի Ս. Ադամեանը, որ մեռաւ 1914 թ.:

***

1917 թւականն էր, Բաղէշ հերոսամարտի շրջանը, երբ քաղաքը պաշարել էին տաճկական զօրամասերը:

Ռոստոմը, ըստ իր սովորութեան, խորհում էր գտնագան ելեքտրական միջոցների մասին եւ փնտռում էր մասնագէտ ելեքտրագէտներ: Մի օր Հայոց Ազգային Խորհրդի շէնքը նա բերեց մի երիտասարդ ելեքտրագէտ, որ նոր էր վերադարձել Բելճիքայից: Իրեն յատուկ խնամքով եւ զուրգուրանքով Ռոստոմը վերաբերւում էր այդ երիտասարդ ինժիներին, որ վերին

աստիճանի համեստ եւ համակրելի անձնաւորութիւն էր։

Այդ պարոնը Թամարայի եւ Դաւիթի որդի Լեւոն Ներսիսեանն էր, որ մանուկ օրերից որբ մնալով, խնամուել եւ դաստիարակուել էր Թամարայի քոյրերի ջանքերով...։

ՆԱՏԱԼԻԱ ԱՄԻՐԽԱՆԵԱՆ-ՄՈՒՐԱԴԽԱՆԵԱՆ

Օրիորդ Նատալիա Ամիրխանեանը ծնուել էր 1863 թուականին Երեւանում, սակայն կրթութիւն էր ստացել Թիֆլիզի ռուսական օրիորդական վիմնազիայում (լիցէյում) որովհետեւ ծնողները իրենց դորձերի պատճառով Երեւանից տեղափոխուել էին Թիֆլիզ։ Նատալիան, ինչպէս իր ժամանակակից երիտասարդներից շատերը, շատ վաղ սկսեց հետաքրքրուել Թիֆլիզում գոյութիւն ունեցող «Ժողովրդական կամք» կոչուած ռուսական յեղափոխական կուսակցութեան գործերով եւ յաճախում էր նրանց դաղտնի ժողովներին, սակայն 1882 թուականին երբ տեղի ունեցաւ այդ դաղտնի խմբակների ազդայնացումը եւ հայերը դատ յեղափոխական խմբեր կազմեցին Նատալիան եւս Օրիորդ Թամարա Ադամեանի ինչպէս եւ Օր. Քաթանեանի հետ մտաւ հայկական խմբակի մէջ եւ աստիճանաբար ամբողջապէս կլանուեց հայկական կեանքով եւ հայկական յեղափոխական շարժումներով։ Նա իր մասնակցութիւնը բերել է այն ժամանակւայ բոլոր դաղտնի ձեռնարկներին, որոնք տեղի էին ունենում Թիֆլիզում. եւ երբ 1890 թուականին կազմակերպուեց Հ. Յ. Դաշ-

նակցութիւնը, Նատալիան առաջին օրիորդներից էր, որ ոչ միայն մասու Դաշնակցութեան մէջ այլ եւ ամէն կերպ նպաստեց նրա զարգանալուն եւ ուժեղանալուն:

Այդ ժամանակներն էր սա, որ Նատալիան իր կեանքը կապեց բժիշկ Մուրադխանեանի հետ... Երիտասարդ զոյգերը ժողովրդին աւելի օգտակար լինելու համար, որոշում են թողնել Թիֆլիսի քաղաքային կեանքը եւ անցնել գաւառ, հաստատուելով վերջնականապէս Ղարաքիլիսայում:

Այսպիսով Նատալիան, ղրկելով լուսաւոր կենտրոնից, դառնում է զաւառական գործիչ: Սակայն ապրելով մի այդպիսի խուլ եւ յետամնաց վայրում, ինչպիսին Ղարաքիլիսան էր, նա երբէք իրեն մենակ կամ դժբախտ չզգաց, որովհետեւ կարողացաւ իր հետ կապել Ղարաքիլիսայի եւ շրջակայքի զգայուն հայ տարրերին եւ մղել նրանց գաղափարական աշխատանքների:

Նատալիան բոլոր ժամանակ անխոնջ կերպով մնաց Հ. Յ. Դ. Ղարաքիլիսայի կոմիտէի անդամ, ստեղծեց եւ կազմակերպեց կանանց խմբեր եւ այդ բոլորը կապեց այն ժամանակւայ Կարմիր Խաչերի հետ: Նատալիայի տունը եղաւ միշտ կենտրոն Ղարաքիլիսա ուղարկուող կամ այնտեղից անցնող յեղափոխական եւ առհասարակ գաղափարական գործիչների համար... Այսպէս չարունակեց նորա կեանքի ընթացքը մինչեւ Հայաստանի Հանրապետութեան հաստատումը եւ անկումը, մինչեւ բոլշեւիկների խուժումը Ղարաքիլիսա:

Հայ բոլշեւիկները, որ հանդուրժել չէին կարող ոչ մի հեղինակութիւն, գժգոհութեամբ տեսան, որ Նատալիա Մուրադխանեանը Ղարաքիլիսայի մէջ դեռ եւս վայելում է որոշ ժողովրդականութիւն... Այդ հանգամանքը բաւական էր, որ բոլշեւիկները անմիջապէս բանտ նետէին Նատալիային, մի յարմար առիթով հաշիւը մաքրելու համար...

Ապօրինի կերպով Հայաստանի տէր դառնալուց յետոյ հայ բոլշեւիկները մի հրէշային որոշում էին տուել – ոչնչացնել անխնայ կերպով Հայաստանի բոլոր աչքի ընկնող դաշնակցականներին...

Եւ 1921 թուից սկսած Հայաստանի բոլոր բանտերում կացնահար եւ գնդակահար ընկան բազմաթիւ

դաշնակցական գործիչներ... Որքան այդ պաղանային սպանդը շարունակւում էր, այնքան ուելի էին կատաղում հայ բոլշեւիկները...

Ղարաքիլիսա աւանի բոլշեւիկեան Ռեւկոմը (յեղափոխական կոմիտէն) եւս եռանդուն կերպով գործի էր լծւել...

Ղարաքիլիսայի փոքրիկ բանտը եւս լցւել էին Ղարաքիլիսայից եւ շրջակայ գիւղերից բերուած դաշնակցական կանաներով...

Ղարաքիլիսայի բանտարկեալները տեղեկութիւններ ունէին այն սոսկալի ջարդերի մասին, որոնց զոհ էին դընացել կամ գնում էին Դաշնակցականները Հայաստանի միւս բանտերի մէջ, գիտէին նոյնպէս թէ ինչպէս երիտասարդ դաշնակցական Արծուիկ Արուվեանը փողոցի մէջ էր գնդակահարւել, բանտը գնալ չկամենալուն համար...

Բանտի ճանապարհին նա կանգ առնելով կանչել էր իր դահիճների վերայ.— Է՛յ, սրիկայ բոլշեւիկներ, ես գիտեմ, որ դուք բանտի մէջ պիտի ինձ չարչարէք եւ յետոյ մեռցնէք, ես համոզւած դաշնակցական եմ եւ պիտի մնամ, զարկեցէք ինձ շնե՛ր... Եւ կանգնելով փողոցի պատի տակ անխռով կերպով, առանց աչքերն իսկ թարթելու ընդունել էր մահը...

Այս բոլոր լուրերը Ղարաքիլիսայի բանտարկեալների վերայ թէ ոգեւորիչ եւ թէ վհատեցուցիչ տպաւորութիւն էին թողնում, սակայն բոլորն էլ խորապէս համոզւած էին, որ մօտալուտ է իրենց վախճանը...

Համարեա վաթսուն տարիքին հասած Նատալիան որ բանտարկեալների մէջ հաւանօրէն ամենից աւագն էր, եւ միակ կինը, ոչ միայն իր կորովը չէր կորցրել այլ եւ պահում էր իրեն բանտի մէջ ամենաարժանաւոր կերպով, սիրտ տալով բոլոր յուսալքւածներին, քաջութիւն

ներշնչելով թոյլերին... Եւ երբ 1921 թ. փետրուարի 16ին դահիճները մոտն բանտարկեալների խուցը եւ սկսեցին խողխողել բանտարկեալներին, դաշնակցական ուսանող Գ. Կիրակոսեանը եւ Նատալիա Մուրադխանեանը՝ երիտասարդ եւ հին սերնդի երկու ներկայացուցիչները ընկան միասին մեւնոյն դահիճի գնդակներից մեծ սառնասրտութեամբ եւ դաշնակցականի վայել կեցուածքով...

Նատալիան առաջին յեղափոխական կինն էր, որ զոհ գնաց հայ բոլշեւիկների նողկալի ոճրին...

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆԵԱՆ-ՆԱԶԱՐԲԷԿԵԱՆ
(ՄԱՐՕ)

Օրիորդ Մարօն Թիֆլիզցի էր, զաւակն էր Թիֆլիզի հարուստ վաճառական Յովհաննէս Վարդանեանի եւ մօտաւորապէս ժամանակակից էր Օր. Թամարա Ադամեանին. սակայն մեծացել եւ հասակ էր ստացել միանգամայն տարբեր միջավայրում:

Մինչդեռ Թամարան կարողացել էր թօթափել իրենից ռուսական ազդեցութիւնը եւ ամբողջապէս կլանուել էր հայկական կեանքով, Մարօն, ընդհակառակը, խորապէս ենթակայ էր ռուսական ազդեցութեան եւ մնաց այդպէս մինչեւ Թիֆլիզից հեռանալը:

1884 թուականին էր, երբ Մարօն աւարտելով Թիֆլիզի կանանց գիմնազիան (լիցէյը) իր եղբօր հետ անցաւ Պետերբուրգ իր կրթութիւնը շարունակելու համար ռուսական համալսարանում:

Առիթ ունեցանք արդէն խօսելու, որ այն ժամանակները ցարական կառավարութիւնը ոչ միայն չէր քաջալերում կանանց բարձրագոյն կրթութիւն ստանալը այլ եւ որոշ խոչընդոտներ էր յարուցանում: Պէտք է ենթադրել, որ այդ պատճառով Մարօն անկարող լինելով

մնալու ռուսական մայրաքաղաքում, բաժանուում է իր եղբօրից, անցնում է Փարիզ եւ մնում է Փարիզի համալսարանը:

Թէպէտ Ռ. Խան-Ազատը, որ ծանօթ էր Մարօի հետ 1886 թուականից սկսած, Մարօի Փարիզում ուսանելու դրդապատճառը բացատրում է նորանով, որ Մարօն իրը թէ Պետերբուրգի մէջ մասնակից է եղել Ռուս յեղափոխականների աշխատանքներին, եւ կասկածելով, որոշել է հեռանալ Պետերբուրգից, ռուս ոստիկանութեան ձեռքը չընկնելու համար: (*)

(*) Տես «Հայրենիք» ամսագիր 1927 թ. № 8 Ռ. Խան-Ազատի Յուշերը:

Թէ Մարօն եւ թէ իր եղբայրը ընտրել էին բժշկական ճիւղը, դուցէ ապագայում միասին աշխատակցելու համար, սակայն միանգամայն տարբեր ուղղութեամբ ընթացաւ դրանց կեանքը։

Երիտասարդ Վարդանեանը, փայլուն կերպով աւարտելով ռուսական բժշկական համալսարանը, ամբողջապէս անձնատուր եղաւ գիտութեան։ Եւ հակառակ նորա, որ ցարական կառավարութիւնը խիստ կերպով հալածում էր ոչ ռուս տարրերին, մանաւանդ հայերին, եւ թոյլ չէր տալիս, որ մինչեւ իսկ գիտական ասպարէզում ոչ ռուսները յառաջադիմեն, այնուամենայնիւ երիտասարդ Վարդանեանը, հաւանօրէն իր արտակարգ կարողութիւնների շնորհիւ, կարողանում է յաղթահարել բոլոր տեսակի խոչընդոտները եւ վերջիվերջոյ դառնում է Պետերբուրգի բժշկական համալսարանի կարեւոր պրոֆեսորներից մէկը։ Այդ ասպարէզում նա մնաց մինչեւ վերջը, բարեխիղճ գիտնականի պէս կատարելով իր բարձր պաշտօնը։ Մարօն ընդհակառակը շատ շուտով ձգեց բժշկական ուսումը եւ նուիրուեց ամբողջապէս յեղափոխական գործին...

Վառվռուն ու կենսուրախ այդ օրիորդը չէր կարող աննկատելի մնալ այն ժամանակները Փարիզի համալսարանը յաճախող սակաւաթիւ հայ ուսանողների աչքից։ Այդտեղ էր, որ առաջին անգամ միմիանց հետ հանդիպեցին բանաստեղծական արտաքինով, փայլչակամ ուսանող Աւետիս Նազարբէկեանը եւ գրաւիչ ու սեւաչեայ Մարօն։ Այդ ծանօթութիւնը ժամանակի ընթացքում մտերմութեան փոխուեց։ Աւետիս Նազարբէկեանն էր, որ այդ ռուսախօս, ամբողջապէս ռուսական ազդեցութեան տակ դտնուած օրիորդի մէջ զարթեցրեց ազգային գիտակցութիւնը, ոգեորեցրեց նրան հայերէն կանոնաւորապէս

խօսել, գրել եւ կարդալ։

Մարօն դեռ եւս Թիֆլիզում եղած ժամանակ մասնակցում էր Նարոդնայա Վոլեա (Ժողովրդական կամք) կոչուած ռուսական յեղափոխական կուսակցութեան խմբական ժողովներին եւ ամբողջապէս կլանուած էր նրանց գաղափարներով...։

Այդ գաղափարներով նա եկել հասել էր Փարիզ, յուսալով որ մի օր պիտի կարողանայ կեանքի մէջ իր նպատակները իրականացնել։ Աւետիս Նաղարբէկեանը եղաւ այն անձը, որ շատ շուտով ըմբռնեց յեղափոխական խառնուածքով այդ երիտասարդ օրիորդի բնական հակումները եւ կարողացաւ նորա ամբողջ համակրանքը ուղղել դէպի հայ ազատագրական գաղափարները...

Այսպիսով շնորհիւ Ա. Նաղարբէկեանի ջանքերին Մարօն ոչ միայն հայացաւ այլ եւ կլանուեց հայ ազատագրական գաղափարով եւ մնաց այդպիսին մինչեւ իր կեանքի վերջը։

Սակայն աւելորդ չենք համարում յայտնել, որ Օրիորդ Մ. Վարդանեանը եւս իր հերթին կարողացաւ ազդել Աւետիս Նաղարբէկեանի վերայ եւ նորա մէջ հեռաքրքրութիւն զարթեցրեց դէպի ռուսական յեղափոխական շարժումները ինչպէս եւ դէպի միջազգային սոցիալիզմը։

Աւետիս Նաղարբէկեանը, որ քիչ ծանօթ էր կամ դուցէ միանգամայն անծանօթ էր այդ հարցերին, Օր. Մարօի ազդեցութեան շնորհիւ էր, որ կլանուեց այդ խնդիրներով եւ սկսեց ուսումնասիրել ժամանակակից յեղափոխական եւ սոցիալիստական գրականութիւնը, մտերմական կապեր սկսեց հաստատել Փարիզում եւ Շուէյցարիայում ռուս յեղափոխական տարագիրների հետ, որոնցից ոմանք մեծ ազդեցութիւն ունեցան Նաղարբէկեանի յեղափոխական ըմբռնումների վրայ։

Ինչպէս պէտք էր սպասել վերջ ի վերջոյ այս երկու երիտասարդ զոյգերի փոխադարձ համակրանքը վերջացաւ նորանով, որ սրանք սիրահարեցին միմիանց վերայ եւ 1886 թուականին ամուսնացան:

*
**

1885–86 թուականներին արտաքսմանի դանդաղ համալսարաններում սովորող մի քանի դաղափարական հայ ուսանողների շրջանում աստիճանաբար սկսում էր հասունանալ այն միտքը, թէ եւրոպական դիւանագիտութեան վերայ ազդելու եւ տաճկահայութեան փրկութեան համար անհրաժեշտ է ստեղծել մի կուռ յեղափոխական կուսակցութիւն: Այդ նպատակի համար նրանք նախ փորձում են կենտրոն դարձնել «Արմենիա» թերթը, որ 1885 թուականից սկսած արդէն լոյս էր տեսնում Մարսելում, սակայն «Արմենիայ»ի խմբագիր Մ. Փորթուղալեանի հետ անկարող լինելով որոշ համաձայնութեան դալու, որոշում են «Արմենիայ»ից անջատ կազմել այդ յեղափոխական կուսակցութիւնը...

Եւ իրօք 1886 թուականին Ժընեւի մէջ համախմբուած 6 ուսանողներ, իրենց համարելով հիմնադիր անդամներ ապագայ կազմուելիք յեղափոխական կուսակցութեան, ընտրում են 3 հոգուց բաղկացած մի յանձնաժողով մշակելու համար ապագայ յեղափոխական կուսակցութեան ծրագիրը: Յանձնաժողովը յաջողութեամբ վերջացնում է իր աշխատանքները, մշակած ծրագիրը ներկայացնում է մնացած ընկերների հաւանութեան, ծրագիրը ընդունելուց յետոյ յեղափոխական կուսակցութիւնը կազմուած է համարուում ու այդ մասին յայտարարուում է հանրութեան մի թռուցիկ կոչով: Այս յեղափոխական կուսակցութիւնը իր հրատարակած «Հնչակ» թերթի անունով կոչուեց Հնչակեան կուսակցութիւն:

Թէ հիմնադիր անդամների եւ թէ ծրագիր մշակող

յանձնաժողովի մէջ կար եւ Մարօ Վարդանեանը։

Մարօն լինելով միակ օրիորդը այդ խմբակի մէջ, քաղաքավարութեան համար չէր, որ նրան ընտրել էին կուսակցական ծրագիր մշակող յանձնաժողովի մէջ, այլ ինչպէս վկայում է հիմնադիր անդամներից մէկը Ռուբէն Խան-Ազատը «Թէ Օրիորդ Մարօն եւ Թէ Ա. Նազարբէկեանը միւսներից (հիմնադիր անդամներից) շատ աւելի ընդարձակ ծանօթութիւն ունէին ռուս եւ ֆրանսիական յեղափոխական մամուլի մասին եւ առհասարակ աւելի շատ էին կարդացած»։

Անշուշտ խնդիրը այստեղ չի վերաբերում այն հարցին, թէ որքան համապատասխան էր այդ ծրագիրը հայ ժողովրդի այն ժամանակւայ պահանջներին, այլ այն, որ Մարօն իրրեւ մտաւորական ուժ եւս յետ չէր մնացած իր այն ժամանակւայ ընկերակիցներից։ Դրանով պիտի բացատրել, որ Մարօն ոչ միայն հանդիսացաւ Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներից մէկը այլ եւ բաւական երկար ժամանակ մնաց Հնչակեանների կենտրոնական մարմնի մէջ եւ մէկն էր նրա գործունեայ անդամներից։

***

Այդ ձեւով 1886 թուին Հնչակեան կուսակցութիւնը կազմուելուց յետոյ, Նազարբէկեանները, որ արդէն ամուսնացել էին, որոշում են թողնել Փարիզի համալսարանի իրենց աշխատանքները եւ փոխադրուել Ժընեւ յուսալով, որ Ժընեւի համալսարանում պիտի կարողանան շարունակել իրենց ուսումը, սակայն շատ չուտով այդ գաղափարը ծանրացան նորակազմ կուսակցութեան կենտրոնի ինչպէս եւ պաշտօնական օրգանի «Հնչակ»ի ամբողջ գործերը։ Այսպիսի պայմաններում, բնական է, որ Նազարբէկեանները անկարող պիտի լինէին կլանուել համալսարանական աշխատանքներով, ուստի ստիպուած եղան լքել այդ բոլորը եւ անձնատուր լինել նոր գործին։

Շատ չուտով Նազարբէկեանների Ժընեւի բնակարանը դառնում է հայ եւ օտար դաղափարական ուսանողների եւ տարագիրների կենտրոնը, ուր յաճախ հանդիպում էին նոքա եւ զանազան այրող խնդիրների շուրջ երկար ժամերով վիճաբանում միմեանց հետ։ Այդ բնակարանում 1887 թուից սկսած ոչ միայն խմբագրւում էր կուսակցութեան պաշտօնական օրգան «Հնչակը», որը բացառապէս ծանրացած էր Ա. Նազարբէկեանի վերայ, այլ եւ այդ բնակարանումն էր դաղտնի կերպով թերթը շարւում եւ այդտեղից շարւածքը տպարան տարւում։

Նազարբէկեանների բնակարանում էր, որ որոշւեց մերժել այն համաձայնագիրը, որը կնքել էին «Հնչակ»ի ներկայացուցիչները Թիֆլիզում նորակազմ Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան հետ։

Ինչպէս յայտնի է Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան կազմակերպութեան սկզբնական շրջանում նորա հիմնադիրները նպատակ ունենալով ի մի համախմբելու բոլոր հայ յեղափոխական ուժերը, հրաւիրել էին եւ «Հնչակ»ի ներկայացուցիչներին։

Թէպէտ «Հնչակ»ի ներկայացուցիչները համաձայնւել էին մտնելու ամբողջապէս Դաշնակցութեան մէջ, սակայն Ժընեւի ընկերները մի քանի ամսից յետոյ հրաժարւեցին, որոշեցին անջատ գործել եւ այդ մասին պաշտօնական յայտարարութիւն տպեցին «Հնչակ»ի 1891 թուի մայիսի համարի մէջ։

***

Անցեալ դարու իննսունական թուականների սկիզբները ոչ միայն տաճկական բանտերում բաղմաթիւ հայ բանտարկեալներ կային այլ եւ դրանցից կարեւորագոյն համարւածներին ուղարկել էին Աքիայի պատմական բանտը, որը թէպէտ Սուլթան Մէճիթի յատուկ կարգադրութիւնով փակւած էր, սակայն Ապդիւլ-Հա-

միտը անհրաժեշտ էր համարել այնտեղ համախմբել հայ կարեւոր թիապարանները։

1894 թուականին այնտեղ կային արդէն 53 բանտարկեալներ Մշի, Վանի, Սեբաստիայ, Կ. Պոլսոյ եւ այլ շրջաններից, կային դրանց մէջ վարդապետներ, քահանաներ եւ մի քանի հնչակեաններ, ինչպէս Պետրոս Մարիմեանը (Տրապիզոնցի), Յարութիւն Ճանկիւլեանը (Վանեցի), Գրիգոր Գլճեան (Տիվրիկցի), ուսանող Պոլսոյ երաւաբանական վարժարանի, ժամագործ Յակոբ (Կեսարացի)։ Այնտեղ էր եւ յեղափոխական գործիչ Պետրոս Տօնապետեան (Վաղարշապատցի)։ (*)

Հնչակի կենտրոնը ցանկանալով քաջալերական խօսք ասելու տաժանելի պայմանների մէջ ապրող բանտարկեալներին, դուցէ եւ ոմանց փախցնելու հնարը մտածելու համար, Աքիա է մեկնում Տիկին Մարօն։

Սակայն հեշտ գործ չէր այն ժամանակուայ դժոխային պայմաններում դնալ հասնել մինչեւ Աքիա...

Տիկին Մարօն, որ ըստ վկայութեան իր ընկերակիցների, վերին աստիճանի յանդուգն ու անվախ անձնուրուրութիւն էր. կարողանում է մեծ յաջողութեամբ այդ ծանր եւ տաժանելի պարտականութիւնը կատարել։

Մարօն իրրեւ Երուսաղէմի ուխտաւոր դնում է նախ Երուսաղէմ, ապա անցնում է Դամասկոս, ուր այդ ժամանակները ռուսական հիւպատոս էր Հայաստանի Կամսարականը։ Մարօին յաջողւում է Կամսարականից վերցնել մի յանձնարարական Աքիայի նահանգապետի վերայ որ իբր թէ Մարօն Պետրոս Մարիմեանի քոյրն է։

Այդ յանձնարարականով Մարօին յաջողւում է ոչ

(*) Այս տեղեկութիւնները քաղւած են Երեւանի Պոլսեանների յուշերից, որը նոյնպէս Աքիայի աքսորական էր. տես դիւան Հ. Յ. Դ. թղթածրար 1718։

միայն դալ հասնել Աքիա այլ եւ կարողանում է մի քանի անգամ մտնել բանտը եւ տեսակցել համարեա բոլոր բանտարկեալների հետ։ Պարզ է որ աշխարհից կտրուած, յուսահատ եւ ծանր վիճակի մէջ գտնուած բանտարկեալների համար մեծ մխիթարութիւն էր Մարօի երեւալը, նորա քաջալերական սրտաբուխ խօսքերը եւ հետը բերած դրամական նուէրները...

Այդ բոլորի հետ միասին Մարօի ուսումնասիրութիւնները յանգում են այն եզրակացութեան, որ կաշառքով կամ այլ միջոցներով անհնար է Աքիայի բանտից որեւէ մէկին փախցնելը, եւ այդ պատճառով թողնում է այդ ծրագիրը։

Ինչպէս յայտնում է Ռ. Բերբերեանը, տաճկական կառավարութիւնը այնուամենայնիւ կասկածելով բանտարկում է Տիկին Մարօին իբրեւ յեղափոխական գործիչ եւ մեծ ջանքեր են պէտք լինում թափել անգլիական հիւպատոսի միջոցով մինչեւ որ կարելի է լինում նրան ազատել տաճկական բանտից։

***

1896 թուականն էր... Երկրի մէջ տեղի ունեցած ջարդերը, հայկական հարցի ճախող ընթացքը եւ Մայիսեան ծրագրի անապատելի վախճանը, բնականաբար հայութեան մէջ պիտի ստեղծէին մի անյոյս եւ վհատեցուցիչ վիճակ... Դժբախտաբար հայ զանգուածների այդ յուսահատ հոգեբանութիւնը վարակում էր եւ յեղափոխական տարրերին։ Հնչակեան կուսակցութիւնը թէպէտ արդէն գոյութիւն ունէր մօտ տասը տարի այնուամենայնիւ դեռ եւս չափազանց թոյլ եւ խախուտ էր նորա կազմակերպական մեքենան, կուսակցական խիստ տիպիկ մի անդամ պակասում էր։ Շնորհիւ այդ դրութեան կուսակցութեան ծոցի մէջ երեւան եկած դժ-

դոհութիւնները աւելի եւս պարպացան Լոնդոնի մէջ կայացած կուսակցական համագումարի ժամանակ, որի ընթացքին տեղի ունեցան մեծ աղմուկներ եւ ծեծկրտուքներ... Կուսակցութիւնը պառակտուեց եւ բաժանուեց երկու անհաշտ եւ թշնամի խմբակցութիւնների, որոնցից իւրաքանչիւրը իրեն Հնչակեան կուսակցութեան հարազատ ժառանգորդ համարելով, հրատարակում էր իր պաշտօնական օրգանը «Հնչակ» անունով: Այդ երկու Հնչակները, որոնք արտաքինով միանգամայն միմիանց նման էին, սակայն բովանդակութեամբ հակոտնեայ եւ տարբեր ուղղութիւն ունէին եւ միմիանց հանդէպ ամենանահանգուրժելի դիրք էին բռնել եւ որ գլխաւորն է, չէին մոռանում միմիանց վերաբերմամբ ամենանողայել հայհոյանքներ գործածել եւ վարկաբեկումներ կատարել: Պէտք եղաւ դիմել մինչեւ իսկ անգլիական դատարանին, այդ ամօթարեր նեբբին վէճը հարթելու համար: Դատարանի որոշմամբ «Հնչակը» մնաց մի խմբակցութեան, որ շարունակեց իրեն Հնչակեան անուանել. սակայն միւս խմբակցութիւնը «Վերակազմեալ Հնչակեան» անունով դուրս եկաւ հրապարակ: Այնուամենայնիւ դրբանով հարցը չը լուծուեց, ընդհակառակը, աւելի ծանր բնաւորութիւն սկսեց ստանալ: Նպատակայարմար ենք համարում այդ մասին խօսք տալ Հնչակի հիմնադիրներից Ռուբէն Խան-Ազատին: Ահա թէ ի՞նչ էր գրում նա «Հայրենիք» ամսագրի 1929ի փետրուար համարի մէջ.— «Պայքարը Հնչակեանների եւ Վերակազմեալների միջեւ՝ մամուլի մէջ արտայայտուած խօսքերով չէր սահմանափակւում: Բանակռիւը յաճախ խմբագրութիւններից տեղափոխւում էր դասախօսութիւների սրահները եւ կամ նոյն իսկ փողոցները, որտեղ տուր ու դմբոցի էր փոխւում: Կրքերը մի ժամանակ այն աստիճան տաքացան, որ այդ հատուածները սկսեցին միմեանց դէմ տե-

ռարներ կատարել: Ամերիկայում սպանման փորձ կատարուեց (Հնչակեան) Սապահ-Գիւլեանի դէմ, Օդեսայում, Հնչակի կենտրոնի հրահանգով, խողխողուեց Վերակազմեալ Գարեգին Զիթ-չեանը: Զիթ-չեանի սպանութիւնից կատաղած Վերակազմեալները տեռորիստներ են ուղարկում Լոնդոն, ուր մէկ օրուայ մէջ երեք Հնչակեանների գետին են գլորում: Այդ Հնչակեաններն էին՝ Բազեցի Սագունին, Համբը եւ մի երրորդը, որի անունը չեմ յիշում: Այս երեք զոհերով չը բաւականանալով, Վերակազմեալները տեռորիստներ են ուղարկում Շէֆցարիա, սպանելու համար նաեւ Աւ. Նազարբէկեանին: Նազարբէկը թէեւ վաղուց էր քաշուել գործերից եւ ոչ մի բանի չէր մասնակցում, բայց նրա դէմ, ինչպէս երեւում է, Վերակազմեալները հին վրէժ ունէին, որ չէր թոյլ տուել «Հնչակ»ը նրանց ձեռքն անցնելու»:

Ահարեկիչը Շուէյցարիայում դանում է Նազարբէկեանի հետքը եւ անաղմուկ կերպով գործը վերջացնելու համար դաշոյնով է կամենում սպանել Նազարբէկին ու մի յարմար ժամանակ, յարձակւում է նորա վերայ, վիրաւորում է թիկունքից եւ ուսից, ապա փախչում անյայտանում է. վէրքերը թեթեւ էին եւ Նազարբէկը առողջանում է:

Այսպիսով ուրեմն Հնչակեան յեղափոխական կուսակցութիւնը, որի հիմքը դրուել էր 1886 թուականին, տասը տարուց յետոյ ոչ միայն հեռացաւ իր քաղաքական գործունէութիւնից այլ եւ ներքին երկպառակութիւնների շնորհիւ այդպիսի այլանդակ կերպարանք սկսեց ստանալ...

Ճիշդ է այնուհետեւ կուսակցական զանազան սրբոցաւ տարրեր փորձեցին վերակենդանացնել այդ կուսակցութիւնը, սակայն անհնար եղաւ: Կուսակցութեան ողնաշարը ծանրապէս ջախջախուել էր...

Կարելի է ասել Հնչակեան կուսակցութիւնը քաղաքականապէս մեռաւ 1896–98 թուականներին...:

***

Տիկին Մարօին Ռուբէն Խան-Ազատը եւ Ռ. Բեր-բերեանը իրենց յուշերի մէջ ներկայացնում են իրարեւ մի անվախ եւ կամքի տէր բայց միաժամանակ վերին աստիճանի փառասէր եւ բռնակալ անձնաւորութիւն եւ Հնչակեան կուսակցութեան մէջ տեղի ունեցած դատաղան անյաջողութիւնները յաճախ, մանաւանդ Ռուբէն Խան-Ազատը, վերագրում է Մարօին, աշխատելով իր պաշտպանութեան տակ առնել Աւ. Նազարբէկեանին: Սակայն փաստերի ընթացքը բոլորովին այլ կերպ են ցոյց տալիս...

Տիկին Մարօն իրեն խառնուածքով յեղափոխական էր եւ յիշեցնում էր անցեալ դարու վաթսունական թուականների ռուս յեղափոխականներին, որոնք արտահայտում Նիհիլիստ անունով էին յայտնի եւ որոնց համար կեանքը բոլորովին այլ արժէք էր ներկայացնում: Այդ խառնուածքով եւ ձգտումներով կինը իր կեանքը կապում է իրեն միանգամայն հակոտնեայ՝ մեղմ, քաղցրաբարոյ, բանաստեղծական ձգտումներով եւ իրապէս բանաստեղծ Աւետիս Նազարբէկեանի հետ: Բախտի մի տարօրինակ քմահաճոյքով դրանց վիճակուում է ղեկավար հանդիսանալ մի յեղափոխական կուսակցութեան...

Մարօյի ամբողջ ձգտումն էր իր ամուսնուն դարձնել հայ հասարակական կեանքի ամենահեղինակաւոր դէմքը, այդ պատճառով նա ոչ միայն ստիպում էր իր ամուսնուն անդադար աշխատել եւ ուսումնասիրել հասարակական շարժումների էութիւնը եւ բնոյթը, այլ եւ ներշնչում էր նորան, որ ինքն է միակ ղեկավարը հայ հասարակական կեանքի... Եւ Նազարբէկեանը լծուած

հայ յեղափոխութեան կառքին վազում էր հեւ ի հեւ...

Այդ երկու անձնաւորութիւնները, որոնք իրապէս սիրում եւ գնահատում էին միմեանց, հաւասարապէս ոգեւորւած էին մի ընդհանուր գաղափարով եւ, չուշ, թէ ուրիշների եւ թէ իրենց համար միաշրջմամբ անկասելի կերպով միմեանց լրացնում էին, ցուցադրելով մի կամք եւ մի ղեկավարութիւն...

Գործը դեռ եւս նոր եւ սաղմնային շրջանում էր, աշխատանքի էին լծւած գաղափարապէս մաքուր երիտասարդներ, որոնք բոլորն էլ ընդունում էին Նաղարբէկեանների հեղինակութիւնը, մանաւանդ մտաւոր առաջնորդում։ Սակայն ոգեւորութեան եւ յաջողութեան շրջանին յաջորդեցին տարակուսանքները եւ անյաջողութիւնները, կուսակցութեան մէջ սպրդեցին անբաղձալի տարրեր, կուսակցութիւնը թէեւ մեծացաւ իր ծաւալով բայց իր ներքին ուժով փոքրացաւ եւ սայթաքել սկսեց իր բարձրութիւնից։ Այն ժամանակ, երբ անհրաժեշտ էր աւելի մեծ կամք եւ կարողութիւն ցուցադրել Նաղարբէկեանները անկարող եղան այդ անել, որովհետեւ ինչպէս գրում է Ռուբէն Բերբերեանը («Վէմ» հանդէս Դ. 1938 թ.) «Հայկական յեղափոխութիւնը պահանջում էր իր ղեկավարներից գերբնական կամքի ուժ, մինչեւ երկու դլխաւոր յեղափոխական ուժերից մէկը՝ Մարօն, թէպէտ օժտւած էր կամքի ուժով, բայց խուժանավար էր իր էութեամբ, իսկ միւս ուժը զուտ մտաւորական էր բայց թոյլ եւ երերուն կամքով, ամբողջապէս հիպնոսացած իր կնոջ կամքով»։

***

Նաղարբէկեան ամուսինները, որ մինչեւ 1896 թուականը Հնչակեան կենտրոնի զուցէ միակ անփոփոխ ղեկավարներն էին, բնական է, որ 1896 թուականի եւ այնուհետեւ եղած ներքին երկպառակութիւնների ժա-

մանակ ամենամեծ հարուածը սրանք պիտի ստանային։

Այդպէս էլ եղաւ։

Սրանք էին, որ պայքարում էին դժգոհ տարրերի դէմ, սրանք էին, որ անջատումը տեղի ունենալուց յետոյ մնացին Հնչակի պարագլուխները... Սակայն դըժբախտութիւնը այն էր, որ Հնչակեան այս մնացորդ խմբակը նոյնպէս սկսեց պառակտուել ինքն իր մէջ եւ Նազարբէկեանները յոգնած այս բոլոր ներքին վէճերից, 1898 թուականին հեռացան ընդմիշտ Հնչակի կենտրոնի գործերից եւ փոխադրուեցին Շուէյցարիա։

Գուցէ այստեղ գործից հեռու վայրում, նրանք առաջին անգամ զգացին, թէ ինչպէս ընդհանուր գործը չֆանալուց յետոյ, պակասեց դէպի միմիանց ունեցած սէրն ու յարգանքը եւս...

Աւետիս Նազարբէկեանը, իբրեւ յեղափոխական կուսակցութեան կարեւոր ղեկավար, առանձնութեան մէջ, բնականաբար, պիտի ձգտէր վերականգնել իր ուժերը եւ հոգեպէս թարմացած պիտի աշխատէր իջնել նորից յեղափոխական կեանքի ասպարէզ, սակայն, ընդհակառակը, նա կարծես աղատագրուեց իր կնոջ աղդեցութիւնից եւ միանգամայն մոռացաւ այն մեծ յեղափոխական գաղափարական գործը որին լծուած էր ինքը մօտ տասը տարի... Կարծես զարթեց նորա մէջ նախկին քաղքենի բանաստեղծը եւ նա անձնատուր եղաւ իր անձնական զգացումներին...

Շուէյցարիայում հանդիպելով իր մօտիկ ազգական օրիորդներից մէկի հետ եւ, մոռանալով միանգամայն այն ծանր դրութիւնը, որի մէջ ապրում էր իր իսկ ձեռքով ստեղծած կուսակցութիւնը, սիրահարուեց այդ օրիորդի վերայ եւ վատաբար լքելով իր կնոջը՝ Մարօին երկու փոքրիկ երեխաների հետ, փախաւ Շուէյցարիայից իր նոր սէրը վայելելու...

Բնական է, որ Հնչակեան կուսակցութեան ներքին պատակման վերայ այս անսպասելի փաստը եւս եկաւ աւելի հրահրելու դժդոհութիւնը եւ պառակտումը, մինչդեռ եթէ Հնչակի ղեկավարութեան մէջ իրենց բարձրութեան վերայ դտնուած լինէին ոչ Նազարբէկեանի պէս անկամք եւ թոյլ անձնաւորութիւններ, այլ, աւելի ճիշդը, Մարօի ըմբռնումների եւ կամքի ու խառնուածքի տէր մարդիկ, դուցէ Հնչակեան կուսակցութիւնը փրկէր քայքայումից եւ ապագայում այն ոճրագործութիւնները տեղի չունենային կուսակցութեան ծոցում, որի մասին առիթ ունեցանք խօսելու...

***

1905 թուականն էր, Ռուսաստանում ծայր տուած յեղափոխական շարժումները ազդել էին մինչեւ իսկ, համարեա կազմալուծուած Հնչակեան կուսակցութեան վերայ: Հնչակեան կուսակցութեան վերջին մնացորդները մի կերպ կարողացան արտասահմանի մէջ իրենց պատգամաւորական ժողովը դումարել, որոշելու համար կուսակցութեան անելիքները:

Երկու դլխաւոր հոսանքներ կային այդ պատգամաւորական ժողովի մէջ. ա) Հնչակեան կուսակցութիւնը վերջնականապէս կազմալուծւում է եւ միանում ռուսական սոցիալ դեմոկրատներին, բ) Շարունակում է իր առաջւայ գործունէութիւնը յօդուտ տաճկահայ դատի:

Աւելի քան մի ամիս տեւող վիճաբանութիւններից յետոյ յաղթանակում է Բ. տեսակէտը, փոքրամասնութիւնը, որի մէջ էին Հնչակի հիմնադիրներից Ռ. Խան-Ազատը եւ Ա. Նազարբէկեանը, յայտարարում է իրեն Հնչակեան, կուսակցութիւնից հեռացած: Այսպիսով Ա. Նազարբէկը վերջակէտ է դնում իր յեղափոխական անցեալին եւ իր ձեռքով ամենահանդիսաւոր կերպով գրում է իր յեղափոխական կեանքի տապանագիրը... Որովհետեւ

այլեւս Մարօն չը կար որ անդադար ներշնչումներ կատարէր, որ կարողանար Նաղարբէկին լծել նոր գործի եւ նոր պայքարի...

Աւեսիս Նաղարբէկեանը մեռաւ քաղաքականապէս, սակայն Մարօն հաւատարիմ իր դաղափարներին ուզեց շարունակել իր սկսած գործը եւ Ռուսաստանում տեղի ունեցած յեղափոխութեան շնորհիւ, հնարաւորութիւն ստանալով Կովկաս վերադառնալու, նա այնտեղ իր վերջին ճիգն է թափում Հնչակեան կուսակցութիւնը փրկելու համար...

Նա մեծ ջանք էր թափում նոր կազմակերպութիւններ առաջ բերելու, բայց արդէն ուշ էր, ծառի բունը կտրուել էր իր արմատից եւ այլեւս կենդանացնել անկարելի էր... Հնչակեան կուսակցութիւնը վաղուց մեռել էր Կովկասում...

Սակայն այս դերազանց ճիգերի հետեւանքը եղաւ միանգամայն աղէտաբեր Մարոյի համար...:

1905ի Ռուսաստանի յեղափոխութեան մեղրամիսին յաջորդեց յետադարձ շարժումը, նորից բանտերը լցուեցին յեղափոխականներով, դրանց մէջ էր եւ Մարօն, որ մեղադրւում էր «երկար տարիներ արտասահմանում եւ վերջին ժամանակները Կովկասում յեղափոխական գործերով զբաղուելուն համար»: Ցարական դատարանը դատապարտեց Մարոյին տաժանակիր աշխատանքի, աքսորեց Սիբիր, ուր քամեց դառնութեան բաժակը մինչեւ 1917 թուականը:

Մօտ տասը տարի Սիբիրում տառապելուց յետոյ, շնորհիւ ռուսական երկրորդ յեղափոխութեան, վերջապէս ազատուեց եւ վերադարձաւ հայրենիք: Նա յամառօրէն դեռ եւս մնացել էր Հնչակեան եւ մտմտում էր մի որեւէ քաղաքական դեր կատարել, սակայն շատ էր ուշացել, Հնչակեան կուսակցութիւնը վաղուց դադարել

էր գոյութիւն ունենալուց Կովկասում, իսկ 1917 թուականներից յետոյ բոլշեւիկեան ծանր թաթը ոչնչացնել էր ջանում ինչ որ չէր համապատասխանում իր աշխարհայացքին...

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿԻՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Առիթ ունեցանք խօսելու, որ դեռ եւս անցեալ դարու ութսունական թուականներին Թիֆլիսի մէջ մի շարք հայ օրիորդներ էին հրապարակ իջել, որոնք աչքի էին ընկնում իրենց զօրեղ անհատականութեամբ եւ քաջութիւն ունեցան, ոչ միայն արհամարհել այն ժամանակուայ հայ հասարակական նեղմիտ հայեացքները, այլ եւ մի կողմից կարողացան պայքարել կնոջ իրաւունքների համար, միւս կողմից հայ տղամարդու կողքին եւ նրա հետ համահաւասար մասնակցեցին ոչ միայն հայ մշակութային աշխատանքներին, այլ եւ հայ հասարակական-յեղափոխական գործերին:

Այդ օրիորդների մէջ յեղափոխական աշխատանքների ասպարէզում, ինչպէս առիթ ունեցանք խօսելու, առաջնութեան պատիւը պատկանում էր Օրիորդ Թամարա Ադամեանին: Օրիորդ Ադամեանի որդեգրած դաղափարները ունեցան իրենց հետեւորդները, որոնց թիւը աստիճանաբար աւելի եւ աւելի չատացաւ, այնպէս որ ինքնուսնական թուականների շէմքին, երբ տաճկահայ դատը դերազանապէս դրաղեցնում էր հայ մտաւորականութեան, ընդ որ թիւ էին կազմում այդ օրիորդները եւ իրենց ներկայութիւնը զգացնել էին տալիս տաճկահայ դատի համար կազմակերպած խմբակցութիւնների մէջ:

1888–89 թուականներին կազմակերպուած «Երիտասարդ Հայաստան»ի մէջ, դրանք արդէն որոշ դեր էին խաղում, իսկ Դաշնակցութեան կազմակերպութեան շրջանին, դրանցից ոմանք, եթէ ոչ անմիջական գոնէ կողմնակի մասնակցութիւն ունէին եւ նպաստեցին Դաշնակցութեան կազմակերպման:

Երբ 1890 թ. օգոստոսին վերջնականապէս Դաշնակցութիւնը ձեւակերպուեց, դրանք բոլորն էլ մտան Դաշնակցութեան մէջ եւ նորակազմ Դաշնակցութեան կարեւոր աջակիցներ եղան:

Դժբախտաբար մեզ չեն հասել դրանցից շատերի անունները, գիտենք միայն, որ յեղափոխական գաղափարներով ոգեւորուած օրիորդների մի խմբակի գլխաւոր կեդրոնամայրը Ն. Մատինեանների բնակարանն էր, որոնց մէջ աչքի էին ընկնում Նիկոլ Մատինեանի երկու քոյրերը՝ Նատալիան եւ Սաթենիկը, Ս. Զաւարեանի քոյր Մարիամը, Օրիորդ Ժէնիա Ադամեանը (Օր. Թամարա Ադամեանի քոյրը), Վարդան Գօլշեանի քոյր Դարիան, Օր. Նատալիա Ամիրխանեան, որի մասին արդէն խօսեցինք, եւ ուրիշներ:

Այս բոլոր օրիորդները համարեա առանց բացառութեան աւարտել էին Թիֆլիսի կանանց գիմնազիան (լիցէյը) եւ պատրաստւում էին դասատու դպրոցների մէջ պաշտօնավարելու, ցանկանալով այդ ձեւով եւ այդ ճանապարհով օգտակար լինելու հայ յեղափոխութեան գործին:

ԺԷՆԻԱ ԱԴԱՄԵԱՆ-ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ

Օր. Ժէնիա Ադամեանը Թամարա Ադամեանի կրտսեր քոյրն էր. աւարտել էր Թիֆլիսի օրիորդական գիմ-

նպիան (լիցէյը) եւ որոշել էր իր ուժերը գործադրել Տաճկաստանում իբրեւ յեղափոխական վարժուհի։

Երբ Սիմոն Զաւարեանը Տրապիզոնի հայոց դպրոցի տեսուչ էր, վարժուհու պաշտօնով հրաւիրեց Տրապիզոն Օր. Ժէնիա Աղամեանին։ Թէպէտ Ժէնիայի ծնողները եւ մօտիկ բարեկամները միանգամայն դէմ էին եւ չէին կարող համաձայնուել, որ իրենց երիտասարդ աղջիկը դնայ Տաճկաստանի պէս մի անապահով եւ բարբարոս համարուած երկիր, այնուամենայնիւ Ժէնիան կարողացաւ ընտանեկան այդ դժուարութիւնները յաղթահարել եւ ճանապարհ ընկաւ Տրապիզոն։ Սակայն տաճիկ կառավարութիւնը կասկածելով արդիլեց նրան Տրապիզոնի հայոց դպրոցի շէնքն անգամ մտնելու եւ անմիջապէս հեռացրեց նրան իբրեւ վտանգաւոր յեղափոխականի...

Ժէնիան վերադառնալով Թիֆլիզ շարունակեց նպաստել նորակազմ Դաշնակցութեան զարգանալուն, թէպէտ շուտով ամուսնացաւ, սակայն այդ հանգամանքը երբէք չարգիլեց միշտ հետաքրքրուել Դաշնակցութեան գործերով եւ իբրեւ հաւատարիմ Դաշնակցական նա իր ուժերը գործադրել է Դաշնակցութեան օգտին։ Կարեւոր է եղել նորա աջակցութիւնը մանաւանդ Դաշնակցութեան գաղտնի գործերին, երբ պահանջւում էր մեծ զգուշաւորութիւն եւ աչալուրջ վերաբերում, չը վտանգելու համար եւ գործը եւ ընկերներին...

Բաւական է յիշատակել, որ այն դժուարին տարիները, երբ ցարական լրտեսները ամէն կերպ հետամուտ էին լինում ձեռք ձգելու ոչ միայն յեղափոխականներին այլ եւ յեղափոխականների տպարանները, Հ. Յ. Դաշնակցութեան առաջին գաղտնի տպարանը կազմակերպուել է Ժէնիայենց տանը, այնտեղ են տպել Դաշնակցութեան առաջին թռուցիկները, դուցէ եւ «Դրօշակ»ի ա-

ռաջին եւ երկրորդ համարները։

Հայ թաթարական ընդհարումների ժամանակ, երբ անհրաժեշտ էր չափազանց մեծ քանակութեամբ ռազմամթերք կենտրոնացնել Թիֆլիսի մէջ, այնտեղից հայկական զաւառները փոխադրելու համար, Ժէնիայենց ընդարձակ տունը իր պարտէզով ամբողջապէս տրամադրուած էր Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական զինական մարմնին։

Այս տանը մէջ էր, որ մեծ զգուշաւորութեամբ կենտրոնանում էին համարեա ամէն օր հարիւրաւոր հրացաններ եւ հազարաւոր փամփուշտներ եւ նոյն զգուշութեամբ փոխադրւում էին հայկական կարիքաւոր վայրերը, իսկ երբ ընդհարումները դադրեցան, զէնքերի եւ ռազմամթերքի մեծագոյն մասը այս տնից փոխադրուեց Տաճկահայաստանի զանազան վայրերը։ Ժէնիան, լինելով զաղտնի աշխատանքների շատ վարժ, բազմաթիւ անդամներ կարեւոր յանձնարարութիւններ է ստացել Արեւելեան Բիւրոյից եւ կարելի է ասել, բոլորն էլ կատարել է մեծ բարեխղճութեամբ։

Բաւական տարիներ եղել է Թիֆլիսի Հ. Յ. Դաշնակցութեան կոմիտէի անդամ։

Ժէնիան ապագայում ծանրաբեռնուած լինելով իր անձնական գործերով թէպէտ դադարեց գործնական աշխատանքներ կատարելուց, սակայն միշտ էլ մնաց հաւատարիմ Դաշնակցութեան գաղափարներին, պատրաստ լինելով պատեհ առիթին իր աջակցութիւնը բերելու եւ օգտակար հանդիսանալու։

ԴԱՐԻԱ ԳՕԼՕՇԵԱՆ-ԹԱԴԷՈՍԵԱՆ

Դարիա Գօլօշեանը Վարդան Գօլօշեանի կրտսեր քոյրն էր, մի վերին աստիճանի եռանդուն եւ լուրջ անձնաւորութիւն, որ նոյնպէս մասնակցում էր Դաշնակցութիւնից առաջ գոյութիւն ունեցող յեղափոխական խմբերի մէջ եւ Դաշնակութիւնը կազմելուց յետոյ մըտաւ նրա մէջ ու անձնատուր եղաւ գլխաւորապէս Թիֆլիզ քաղաքի կուսակցական աշխատանքներին: Սա եւս իր միջնակարգ կրթութիւնը ստացել էր Թիֆլիսի օրիորդական գիմնազիոնում եւ վարժուհութեամբ էր պարապում Թիֆլիզի հայոց դպրոցներում: Թէ դպրոցի մէջ եւ թէ ազատ ժամերին ամբողջապէս նուիրուած էր Դաշնակցութեան գաղափարները արծարծելու գործով:

Օրիորդ Գօլօշեանը իրրեւ յուսոյ եւ գաղտնապահ անձնաւորութիւն վայելել է այն ժամանակուայ ընկերների ուշադրութիւնը եւ վստահութիւնը: Այդ պատճառով 1892–93 թուականներին Բիւրոյի թէ Թիֆլիզի Կ. Կոմիտէի գանձապահ–հաշուապահն է եղել, ինչպէս այդ երեւում է Դաշնակցութեան Կ. Դիւանի մէջ մնացած մի փոքրիկ հաշուեմատեանից: (*)

Այդ փոքրիկ հաշուական մատեանը ծառայել է Օր. Գօլօշեանին նաեւ իբր յուշատետր, ուր նա մի քանի մտքեր է յայտնել ուսերէն լեզուով: Աւելորդ չենք համարում մէջ բերել մի կտոր այդ յուշատետրից, գաղափար տալու համար նրա այն ժամանակուայ մտայնութեան մասին.— «Ոմ երիտասարդ ժամանակ ամուր կապերով չի կապել մի որեւէ մեծ, որեւէ օգտակար

(*) Տե՛ս Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Դիւանի հաշուական մասի թիւ 4 թղթածրարը:

գործի հետ, այդպիսին պիտի ընդունի, որ իր երիտասարդութիւնը կորցրել է անարժէք կերպով, որքան էլ այդ երիտասարդութիւնը անցրած լինի ուրախ եւ քաղցր յիշողութիւններով»:

Պէտք է ընդունել որ այդ ձեւի մտածելակերպը յատուկ չէ եղել միայն օրիորդ Գոլոչեանին, այլ եւ այն ժամանակւայ դաղափարական երիտասարդութեան, որոնցից իւրաքանչիւրը աշխատել է իր կեանքը կապել Դաշնակցութեան պէս մի վեհ կուսակցութեան եւ անսահման նուիրումով ծառայել է նորա դաղափարներին...

Օրիորդ Գոլոչեանը հաւանօրէն Բիւրոյի հաշւապահ-պանձապահ եղած ժամանակն է հանդիպումներ ունեցել Անտառային բարձրադոյն ճեմարանը նոր աւարտած Արշակ Թադէոսեանի հետ, որը այդ ժամանակներից Հ. Յ. Դ. Բիւրոյի կարեւոր անդամներից էր: Ժամանակի ընթացքին նրանք մտերմացան եւ ամուսնացան:

Այնուհետեւ աստիճանաբար Դարիան կլանուեց իր ընտանեկան հոգերով եւ այլեւս հնարաւորութիւն չունեցաւ ամբողջապէս նուիրուելու իր սիրած դաղափարական գործին: Դարիայի եւ Արշակ Թադէոսեանի անդրանիկ որդին Սուրէն Թադէոսեանն էր, որ հայկական բանակի սպաներից էր եւ քաջարար նահատակուեց 1918 թ. Ղարաքիլիսայի տակ եղած ահեղ կռիւներում:

ՄԱՏԻՆԵԱՆ ՔՈՅՐԵՐ

Նատալիա Մատինեան.—

Օրիորդական այդ խմբակի մէջ աչքի էին ընկնում Մատինեան երկու քոյրերը: Մեծը Նատալիան, որ Դաշնակցութեան կազմակերպութեան առաջին իսկ օրերից անդամագրուել էր Դաշնակցութեան: Հայ ժողովրդին օգտակար լինելու համար, հաւանօրէն ընկերների թե-

լադրանքով, ընտրեց մանկաբարձութիւնը, յուսալով, որ կուսակցական գործերով կարող է զանազան վայրեր մեկնել, եւ իր մասնագիտութիւնը ոչ միայն կը նպաստէ ժողովրդի հետ շփելուն, այլ եւ հնարաւորութիւն կը տայ ազատ մնալու ոստիկանական հսկողութիւնից...

Եւ որովհետեւ այդ ժամանակները Կովկասում այդպիսի դպրոցներ գոյութիւն չունէին, Նատալիան ստիպուած եղաւ գնալ Մոսկվա:

Մոսկվայում մանկաբարձութիւն սովորելու հետ միասին, նա կարողացաւ մասնակից լինել դաղափարական հայ ուսանողութեան մտաւոր աշխատանքներին: Վերադառնալով Թիֆլիզ, թէպէտ նա նեփրեց իր մասնագիտութեան, սակայն շնորհիւ այդ մասնագիտութեան, նա, մանաւանդ, կուսակցութեան սկզբնական շրջանին կարողացաւ բազմաթիւ դաղտնի յանձնարարութիւններ կատարել, Բիւրոյի եւ անհատ կարեւոր ընկերների խնդրանքով:

Լուրջ, լռակեաց եւ սառնասիրտ այդ օրիորդը կարողանում էր լինել այնպիսի տեղեր, որոնք մատչելի չէին շատերին... Հակառակ նորա, որ տարիների ընթացքին նա պառաւում էր, սակայն իր հետաքրքրութիւնը դէպի Դաշնակցութիւնը երբէ՛ր չը պակասեց այլ մնաց նոյնը ինչ որ իր երիտասարդական խանդավառ օրերին:

***

Սաթենիկ Մատինեան (Ծաղիկ)

Այլ էր Սաթենիկ Մատինեանի խառնուածքը: Խիզախ, անվախ, վճռական եւ յանդուգն այդ օրիորդը գիտակցում էր, որ մեծ զոհաբերութեամբ միայն հնարաւոր պիտի լինի իրականացնել հայ ժողովրդի փրկութեան գործը...

Նա թէպէտ արդէն վարժուհի էր Թիֆլիզի հայոց դպրոցներից մէկում, սակայն հոգեկան բաւականութիւն չստանալով այդ խաղաղ աշխատանքից, նա թողեց իր հայրենի տունը, հանդիսաց դործը եւ Հ. Յ. Դաշնակցութեան Առաջին Ընդհանուր Ժողովից յետոյ դնաց Թաւրիզ, իբրեւ վարժուհի Լիլաւայի դպրոցի, բայց իրապէս նպիրուելու յեղափոխական դործին եւ յարմար ժամանակը Դաշնակցական դործիչների հետ միասին մըտնելու Երկիր։ Այստեղ են ահա սկսում Օրիորդ Սաթենիկի՝ յեղափոխական անունով Ծաղիկի իրապէս արժէքաւոր աշխատանքները։

***

Վանի եւ առհասարակ Տաճկահայաստանի արեւելեան մասերի հետ կապելու եւ յարաբերութիւններ ստեղծելու համար կարեւոր վայրեր էին հանդիսանում Ռուսական Իգդիրը եւ Պարսկական Ատրպատականի շրջանը: Սակայն Իգդիրի գիծը անցեալ դարի ութսունական թուականներից սկսել էր վտանգուել եւ համարեա անանցանելի էր դարձել շնորհիւ, գլխաւորապէս, Տաճկական սահմանագլխում եւ Արարատի փէշերին բնակուող աւազակաբարոյ քրտերի: Այդ իսկ պատճառով նորակազմ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր ամբողջ ուշադրութիւնը դարձրել էր Պարսկաստանի գծի վերայ եւ աշխատում էր այնտեղ խարիսխ նետել, յենարաններ հաստատել: Եւ իրօք Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմակերպութեան սկզբնական շրջանից սկսած, Պարսկաստանում թափել է մեծ եւ բազմատեսակ աշխատանքներ:

Արտասահմանից, Թիֆլիզից, Բաքուից եւ Անդրկովկասի այլ վայրերից հայ լաւագոյն մտաւորականները, ոմանք ինքնաբերաբար, ոմանք յատուկ կուսակցական հրահանգով 1890–91 թուականներից սկսած համախմբուում են Թաւրիզի եւ Սալմաստի շրջանի հայ գիւղերի մէջ եւ կարճ ժամանակի ընթացքում Դաշնակցական մտաւորականները կարողանում են ոչ միայն վերցնել իրենց ձեռքը այդ շրջանների կրթական գործը, այլ եւ յեղափոխական շունչով վարակում են Ատրպատականի ամբողջ հայութիւնը:

Դաշնակցական գործիչները իրենց անթերի բարք ու վարքով եւ յեղափոխական կեցուածքով իրաւամբ յիշատակ են առաջ բերում յետամնաց եւ խաւար Թաւրիզի, ինչպէս եւ Սալմաստի շրջանի հայութեան մէջ:

Զարմանալի չէ լինի, եթէ ասենք, որ հայ

ուսուցչի լաւագոյն տիպը կատարելագործուել է Պարսկաստանում։ Դաշնակցական ուսուցիչը ոչ միայն դաստիարակիչ էր հայ մանուկների եւ հայ հասարակութեան, այլ եւ անսահման զոհաբերող էր։ Նա գրչի հետ միասին զիտէր եւ սովորեցնում էր ուրիշներին զէնքի գործածութիւնը, պէտք եղած ժամանակ զէնքը ձեռին նա քաջարար Երկիր էր անցնում եւ անվախ չափւում էր թշնամու հետ։

Համարեա բոլոր այն մտաւորականները որոնք այդ ժամանակները եղել են Պարսկաստանում, վերջ ի վերջոյ մեր կուսակցութեան կարեւորագոյն դէմքերն են դարձել։ 1891–96 թուականներին մենք հանդիպում ենք այնտեղ Յովսէփ Արղութեանին, Յովհան Դաւթեանին, Նիկոլ Դումանին, Սարգիս Օհանջանեանին, Բարսեղ Գրիգորեանին (Աբամելիքին), Տիգրան Ստեփանեանին, Թորոսին (Գալուստ Ալոյեանին), Վարդանին, Սպոյին եւ շատ ուրիշներին, որոնք համարեա բոլորն էլ չափազանց համեստ վարձատրութեամբ ուսուցիչ են վարձւել եւ ամէն տեսակ զոհաբերութիւն են տարել իրենց դաղափարները տարածելու համար։

Այս մտաւորականների յաջողութիւնը դլխաւորապէս կայանում էր նրանում, որ իրենց քարոզած դաղափարների եւ իրենց անձնական կեանքի եւ կենցաղի մէջ ներհակութիւն չը կար։ Ինչ որ քարոզում էին, նոյնը աշխատում էին իրականացնել իրենց անձնական կեանքի մէջ։

Ահա թէ ինչպէս էր պատկերացնում այդ կեանքը Յովսէփ Արղութեանը, որ Դաշնակցութեան առաջին Ընդհանուր Ժողովից յետոյ Օրիորդ Սաթենիկի հետ անցել էր Պարսկաստան Երանդ Ղազարեան անունով։

«Թաւրիզի Էլիաւա թաղամասում, ուր աշխատում էր Յովհան Դաւթեանը իր ընկերներով, սկսել էր մի

չտեսնուած, անսովոր նոր կեանք։

«Դասախօսութիւններ, կիրակնօրեայ ձրի դասընթացքներ, երեկոյթներ, վերջապէս մի շարք կուլտուրական, ձեռնարկներ մի թարմ հոսանք էին մտցրել Թաւրիզի քարացած կեանքի մէջ։

«Ո՞վ էր տեսել, որ Պարսկաստանի հարեմական կեանքին ենթակայ հայ կինը յաճախի թատրոն, ներկայ լինի դասախօսութիւններին ու երեկոյթներին։

«Քանի գնում աւելի եւ աւելի խորանում էր ժողովուրդի լայն խաւերի համակրանքը դէպի այդ ուսուցիչները, եւ այդ բանին նպաստում էր այն զաղափարական համերաշխութիւնը, որ գոյութիւն ունէր ուսուցչական խմբի մէջ։

«Խումբը բաղկացած էր 8–10 հոգուց, ապրում էր մի ընակարանում միասին։ Կազմել էին մի փոքրիկ կոմմունա (համայնք) եւ վերացրել սեփականութիւնը։

«Բոլորի ռոճիկը ստանում էր մէկը, ընդհանուր ծախսարարը։ Նա էր հոգս տանում ընկերների ուտեստի, հագուստի, ծխախոտի եւ այլ պէտքերի մասին։ Ոչ ոք մի շահի ծախսել չէր կարող, որովհետեւ դրամ բացարձակապէս չունէր...

«Ուսուցիչների ընակարանը մի խորհրդաւոր վայր էր կարծես։ Գալիս էին ինչ որ անծանօթ մարդիկ, հիւծուած, յոգնած դէմքերով, մնում էին մի քանի օր եւ նորից անհետանում։

«Ովքե՞ր էին դրանք...

«Կուլտուրական աշխատանքի հետ զուգընթացաբար կատարում էր մի ուրիշ, աւելի ծանր ու դժուարին աշխատանք։

«Մեր ազատագրութեան առաջին շրջանն էր, լի զաղափարական էջերով։

«Եկողները նրանք էին, այդ զաղափարի սպասա-

ւորները, որոնք գալիս էին հանդիստ գտնելու այդ խորհրդաւոր բնակարանում, յոգնած, ուժասպառ...

«Երկար թափառել էր նա Վասպուրականի եւ Տարօնի լեռներում, իր պարէնը, իր հրացանը ուսին, օրեր, շաբաթներ քալել էր անվերջ, պարտքի կատարման ճանապարհին, յոգնել էր նա եւ այժմ գալիս էր հանգստանալու իր մտերիմ ընկերների շրջանում:

«Նա ճանապարհին եղել էր մի ուրիշ վայրում, որտեղ նրան ընդունել էին նոյնքան սիրալիր:

«Դուշմանի ձորի բերանում գտնուող հինաւուրց Դերեկի վանքում նա առաջին հանդիստն էր առել Թաւաքալեան վարդապետի մօտ:

«Այժմ գալիս էր Թավրիզ, հանդստանալու, թարմանալու եւ նոր հրահանգներ ստանալու, ու երբ հանդիպում է իր ընկերներին, մոռանում է իր կրած բոլոր տանջանքները:

«Պետո, Սարգ, Կարօ (Արիստակէս Զօրեան), Թորոս (Գալուստ Ալոյեան), Զաթօ, Շէրօ եւ էլի լատերը եւ շատ ուրիշներ...

«Ահա գրանք էին, որ գալիս էին զուլումի աշխարհից եւ նորից նոր հրահանգներով վերադառնում լի յոյսերով, լի հաւատով...

Ահա այս իրայատուկ դաղափարական կոմմունայի հաւատար անդամն էր Օր. Սաթենիկ-Ծաղիկը եւ այս մթնոլորտի մէջ էր, որ դաղափարապէս աւելի եւ աւելի էր կոփվակերպւում նա, սակայն նա միայն դպրոցական գործով չէ որ զբաղում էր Թավրիզում, նրան բաժին էր հասած չփւել Թավրիզի կանանց եւ օրիորդների հետ ,պատրաստել նրանց հոգեպէս եւ դաղափարապէս: Սակայն ամդ գործը այնքան էլ հեշտ չէր, Թավրիզի հայութիւնը ապրում էր իւրայատուկ պայմաններում եւ թափանցել ընտանիքից ներս չա-

վազանց դժուար էր։

Թաւրիզի կանանց այդ ժամանակւայ դրութեան մասին որոշ տեղեկութիւններ է տալիս ընկ. Սամսոնը, որ իր ամբողջ յեղափոխական գործունէութիւնը անցրել է Ատրպատականում։

«Յուսարեր»ի 1931 թ.ի համարներում գրում է նա. «Թաւրիզի բուն ժողովուրդը ապրում էր հին նահապետական կեանքով, յետամնաց ու ճնշած պարսկական ազդեցութեան տակ։ Հարեմական կեանքը տիրապետում էր հայ ընտանիքում։ Հայ կինը առանց ծածկոցի (չարսաւի) մէջ փաթաթւելու փողոց չէր կարող դուրս գալ. դպրոց յաճախող աշակերտուհիներն անգամ ծածկոցներով էին պատում»։

Այսպիսի միջավայրի մէջ էր որ պիտի աշխատէր օրիորդ Սաթենիկը։

«Օրիորդ Սաթենիկը, գրում է ընկ. Սամսոնը, մօտիկ յարաբերութիւններ ստեղծելով մի քանի աշքի զարնող ընտանիքների հետ, իր ծանրախոհ ու լուրջ բնաւորութեան շնորհիւ շատ սիրւում եւ յարգւում է դրանց բոլորի կողմից»։

Սակայն նրա նպատակն է լինում, որ Թաւրիզի բոլոր կանանց կարողանայ կապել Հ. Յ. Դաշնակցութեան հետ եւ այդ նրան յաջողւում է...

Ահա այդ առաջին ժողովը, որը կազմակերպել էր Օր. Սաթենիկը։

«Թաւրիզի հայ կանայք փաթաթւած սեւ ու կապոյտ ծածկոցների մէջ շտապում են ժողովի, ոչ ոք չի կամենում բացակայել։ Բոլորը լուռ նստած են, խօսում է Օր. Սաթենիկը։ Այդ բոպէին նա կատարեալ առաքեալ էր, մարմնացած գաղափար, նորա հոգու խորքից դուրս էին թռչում հայրենիքի թշւառ ու դաժան կեանքի պատմութիւնները։ Մոլեռանդ քարոզչի

նման, նա նկարագրում էր այն դժոխքը, որ Տաճկահայաստանն էր կոչւում, ուր տառապում էր հայ ժողովուրդը ազգովին...

«Ժողովականները յուզւած, զղացւած են, շատերը լուռ հեկեկում են...

«Ցանկարծ ամէն կողմից լսւում է. «Օրիո՛րդ, մենք պատրաստ ենք, մենք ամէն ինչ կ'անենք, ինչ որ պէտք է, ինչ որ դուք ցանկանում էք...»

Շնորհիւ այս ձեւի աշխատանքների Թավրիզի ամբողջ լաւագոյն կանայք Օր. Սաթենիկի միջոցով կապւում են Հ. Յ. Դաշնակցութեան հետ եւ չեն խնայում իրենց աշխատանքներն ու լումաները...

Օր. Սաթենիկը օգտւելով այդ յաջողութիւնից հիմք է դնում «Թավրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան», որի նպատակն էր չափահաս օրիորդների մէջ կրթութիւն տարածել, լաւ մայրեր դարձնել նրանց, միաժամանակ կար ու ձեւ սովորեցնել: Ինչ խօսք որ Օր. Սաթենիկը դլխաւոր ղեկավարն էր այդ ընկերութեան, սակայն ընկերութեան բեղմնաւոր գործունէութիւնը չարունակւել է Օր. Սաթենիկի Թավրիզից հեռանալուց եւս երկար տարիներ:

Այդ գործերից զատ Օր. Սաթենիկը դարձ է տալիս Թավրիզի «Արովեան» դրագարանին, մասնակցում է յեղափոխական եւ այլ նպատակներով կազմակերպւած երեկոյթներին, իբրեւ սիրող ստիպւած բեմ է բարձրանում եւ որոշ դերեր է խաղում, որովհետեւ այս ճանապարհով միայն կարելի կը լինէր թէ դպրոցի եկամուտները ապահովել, թէ յեղափոխական նպատակների համար դրամ ձեռք բերել եւ թէ կարելի կը լինէր կապել իրենց հետ Թավրիզի ամբողջ հայութիւնը...

Սակայն այդ բոլորը չեն բաւականացնում Օրիորդ

Սաթենիկին եւ նա պատրաստւում է Երկիր անցնել իր ուժերը այնտեղ օգտագործելու համար:

Ընկերների որոշմամբ Նիկոլ Դումանը, Իշխան Յ. Արղութեանը եւ Օրիորդ Սաթենիկը թողնում են Թավրիզը եւ անցնում Սալմաստի շրջանը, ապա փոխադրւում են Դերեկի պատմական վանքը, ուր մի խումբ հայդուկներից դատ Երկրից-Վանից եկել էին Պետոն եւ Արամելիքը՝ Բարսեղ Գրիգորեանը: Կարելի է ասել այս խմբակը Պարսկաստանի եւ Երկրի մէջ աշխատող կարեւորագոյն ընկերներն էին, որ համախմբուել էին միասին իրենց ապագայ անելիքների մասին խորհրդակցելու: Այս խորհրդակցութեան մասնակցում էր եւ Օր. Սաթենիկ-Ծաղիկը իբրեւ համահաւասար անդամ բոլորի:

Այդ խորհրդակցութիւնների ընթացքին էր, որ Դերեկի վանքի վերայ քրդական յարձակումները տեղի ունեցան:

Ինչպէս հետագայում պարզուեց այդ յարձակումները կազմակերպել էր Վանի վալին, տեղեկանալով Բահրի փաշան: Այդ նպատակով նա յատկապէս եկել էր Բաչկալէ եւ Շարաֆ բէյի քրտերի հետ մի խումբ զինուորներ միացնելով, կարգադրել էր յարձակուել Դերեկի վանքի վերայ, աւերակ դարձնելու համար վանքը եւ սրի քաշելու բոլոր հայդուկներին:

Սակայն, ինչպէս ասում են, Բահրի փաշայի մուրազը չիրականացաւ, որովհետեւ վանքի մէջ ապաստանող հայդուկները, ոչ միայն քաջարար դիմադրեցին այլ եւ քրդերին մեծ կորուստներ պատճառելով փախցրեցին նրանց...

Այդ կռիւների ընթացքին էր որ իր քաջութեամբ փայլեց Նիկոլ Դումանը:

Այդտեղ էր որ Թավրիզի դպրոցի վարժապետ Նի-

կոլը, ոչ միայն իր առաջին յեղափոխական մկրտութիւնը ստացաւ այլ եւ երեւան բերեց իր գեկավարի ընդունակութիւնները, խոր հիացմունք պատճառելով բոլոր ընկերներին: Այդ կռիւները այնպիսի խոր տպաւորութիւն էին թողել քրդերի վերայ, որ երկար տարիներ նրանք երդում էին Ֆէդայիների քաջութեան մասին եւ ողբում էին իրենց կորուստները...

Օր. Սաթենիկ-Ծաղիկը, որ ակտնատես էր այդ կռիւներին եւ կեանքի մէջ առաջին անգամն էր կռիւ տեսնում, ոչ միայն փակւած չէր իր սենեակում եւ ատրսափով սպասում էր կռւի վախճանին, այլ անվեհեր կերպով դիրքից դիրք անցնելով խրախուսում էր մարտիկներին եւ վիրաւորներ էր բաժանում նրանց:

***

Կռիւները վերջացան, վերջացան եւ խորհրդակցութիւնները: Համաձայն որոշ ծրագրի նոր ուժեր պիտի մտնէին Երկիր Պեսոի հետ. դրանց մէջ էր Իշխան Արզութեան: Այդ խմբակին էր ցանկանում միանալ նաեւ Օրիորդ Սաթենիկը, սակայն ընկերները չէին կամենում Օրիորդ Սաթենիկին իրենց հետ վերցնել, նոխ ճանապարհների դժուարութեան եւ վտանգաւորութեան պատճառով եւ երկրորդ անյարմար էին համարում... իբրեւ կնոջ իրենց հետ վերցնելը: Թէպէտ Սաթենիկը ոչ մի կարեւորութիւն չէր տալիս ոչ ճանապարհների վտանգաւորութեան եւ ոչ իր կանացիական դրութեան, այնուամենայնիւ ստիպւած համակերպւեց ընկերների հետ եւ փորձեց օրինաւոր ճանապարհով Երկիր մտնել իբրեւ վարժուհի: Երբ Պարսկաստանում կատարած բոլոր փորձերը անյաջող վերջացան, Սաթենիկը, որ յուսահատողներից չէր, թողեց Պարսկաստանը, անցաւ Կարսի շրջանը, որպէսզի միանայ Արամ

Արամեանին եւ Դժոխքին, որոնք այդ օրերին պատրաստուում էին Երկիր անցնել: Սակայն նրան չյաջողուեց միանալ Երկիր անցնող ընկերներին, անկարող եղաւ օրինաւոր ճանապարհով մտնել Երկիր եւ մի քանի ամիս անյաջող կերպով աշխատելուց յետոյ, Արեւելեան Բիւրոյի խորհրդով վերադարձաւ նորից Պարսկաստան, այս անգամ աշխատելու, գլխաւորապէս, Սալմաստի շրջանում, Տաճկաստանի սահմանի վրայ, որ այդ ժամանակները արդէն կարեւոր տեղ էր գրաւում եւ ուր համախմբուել էին դաշնակցական մտաւորականները:

1895 թուականն էր, երբ Օրիորդ Սաթենիկը հաստատուեց Սալմաստի մէջ իբրեւ վարժուհի, պաշտօնավարելով Նիկոլ Դուման տեղը, որովհետեւ վերջինս անցել էր Երկիր մի խոշոր «գինատար» խմբի հետ...

Այդ ժամանակ Սալմաստի շրջանը դարձել էր Արարատեան ամենակարեւոր շրջանը որովհետեւ գինատար խմբերը կազմակերպում եւ Երկիր էին անցնում Սալմաստի վերայից: Վանի հետ կապը աւելի էր սերտացել, աւելի յաճախ էին սուրհանդակները երթեւեկում Վանի եւ Սալմաստի միջեւ եւ այդ պատճառով նպատակայարմար էր համարուել յատուկ անձնաւորութիւն ունենալ այդ վայրում: Այդ գործը յանձնուել էր բժիշկ Բրիստափոր Օհանեանին, որ Ժընեւի բժշկական համալսարանը աւարտելուց եւ Ռուսաստանում անհրաժեշտ քննութիւնները տալուց յետոյ եկել հաստատուել էր Սալմաստում:

Արտաքնապէս նա բժիշկ էր, սակայն նորա գլխաւոր զբաղմունքը Դաշնակցութիւնն էր...

Նրա ձեռքով էին անցնում Երկիր գնացող եւ Երկրից եկած բոլոր նամակները, նրա մօտ էին տեղի ունենում բոլոր կարեւոր խորհրդակցութիւնները, նա էր կարգադրում գինատար խմբերի եւ սուրհանդակների

վերաբերեալ բոլոր գործերը իսկ այդ բոլոր աշխատանքներին մասնակից էր Օր. Սաթենիկը։

Այդ ժամանակներն էր, որ թէ Թավրիզի եւ թէ Սալմաստի ընկերների մէջ ստիճանաբար հասունանում էր այն գաղափարը, որ մանր խմբերով Երկիր անցնելը չի ազդում քրդերի վերայ, որոնք հետզհետէ սկսել էին աւելի յանդուգն եւ համարձակ դառնալ եւ ամէն կերպ աշխատում էին Հ. Յ. Դաշնակցութեան կենտրոնական խմբերի երթեւեկութիւնը խանգարել։ Այդ կողմից զգուշի դեր էր կատարում մանաւանդ Շարաֆ բէյի ցեղը, որը գտնուելով Պարսկական սահմանագլխի մօտերքը՝ Արաղայի շրջանում, ամէն տեսակ ոճրագործութիւններ էր կատարում Արաղայի գաշտի փոքրաքանակ Հայերի վերայ եւ ամէն կերպ նպաստում էր տաճիկ կառավարութեան հետապնդելով յեղափոխականներին։ Գլխաւորապէս Շարաֆ բէյի ցեղն էր, որ 1905 թէին Վանից հեռացած յեղափոխական խմբերի վերայ յարձակուեց եւ բոլորին գաղանարար կոտորեց։

Այդ իրաւամբ ահաւոր աղէտը, որին գոհ գնաց համարեա Վանի ամբողջ ծաղիկ երիտասարդութիւնը, աւելի հասունացրեց արշաւանքի գաղափարը եւ ստիպեց յեղափոխականներին մի ուժեղ բանակ կազմել խստիւ կերպով պատժելու Շարաֆ բէյի քրտերին եւ ընդհանրապէս տարատի տարածելու քրդերի մէջ...

Հակառակ նորա, որ խստիւ դաղանի էին այդ խորհրդակցութիւնները, այնուամենայնիւ այդ միտքը զարմանալի արագ կերպով ժողովրդականացաւ մարտական կարով ունեցող հայ երիտասարդութեան մէջ։

Եւ ահա զանազան վայրերից Հ. Յ. Դաշնակցութեան պատկանող կամ սրբազան վրէժով լցած դանազան երիտասարդներ սկսեցին կենտրոնանալ Պարսկաստան... Դա ողեւորութեան եւ յոյսերի մի դար-

մանալի շրջան էր, տենդագին աշխատանք էր սկսած ամէն տեղ մանաւանդ Պարսկաստանում... Զափաղանց դժուարին գործ էր գաղտնի ճանապարհներով Ռուսաստանի խորքերից դէնքեր եւ այլ ռազմամթերք հասցընել մինչեւ Թաւրիզ, Թաւրիզի դաշնակցական արհեստանոցում կարգի բերել եւ նոյնպիսի զգուշութեամբ փոխադրել Սալմաստ...

Անհամեմատ դժուարին գործ էր արշաւանքի համար ընտրել մի քանի հարիւր կարեւոր մարտական ուժեր եւ Ռուսաստանի կամ Պարսկաստանի գանազան վայրերից առանց աղմուկի համախմբել Սալմաստի գանազան գիւղերի մէջ եւ դրանց բոլորի առօրեայ կրիւը հոգալ... Ով ծանօթ է այն ժամանակւայ պայմաններին եւ այդպիսի աշխատանքներին, նա միայն կարող է ըմբռնել այդպիսի մի գործի դժուարութիւնը... Ի պատիւ Դաշնակցական ընկերների, պէտք է ասել, որ նրանք լիապէս կատարեցին իրենց վերայ դրած պարտականութիւնը եւ այդ անհնարին գործը մեծ զոհողութիւնների գնով կարողացան գլուխ բերել:

Օրիորդ Սաթենիկը, որ այդ աշխատանքների կարեւոր վայրի մէջ էր գտնւում, եւ արշաւանքի ջերմ կողմնակից էր, այդ գործին էր նւիրել իր ամբողջ ուժերը. նա ոչ միայն օգտակար եղաւ Սալմաստի շրջանում այլ եւ իր ուժերը փորձեց եւ դէնքերի փոխադրութեան մէջ ու յաջող կերպով կատարեց այդ աշխատանքը...

Թէպէտ արշաւանքը ինչ ինչ պատճառներով ձգձգուեց, սակայն վերջ ի վերջոյ արշաւանքի մասնակցող ընկերները մեծ ոգեւորութեամբ եւ բարձր տրամադրութեամբ 1897 թւին յուլիսի 24ին ճանապարհ ընկան դէպի Խանասոր պատժելու Շարաֆ բէկի ցեղը...

Օրիորդ Սաթենիկը, որ այդ ժամանակաշրջանին աշխատում էր մերթ Սալմաստում մերթ Թավրիզում, բոլոր ժամանակ մնաց ջերմ կողմնակից արշաւանքին եւ արշաւանքի օրերին Սալմաստ էր, լծուած եռանդուն աշխատանքների... Նա գիտէր, որ արշաւանքից շատերը կարող են չվերադառնալ, շատերի հետ նա կապուած էր ընկերական զաղափարական կապերով, սիրում էր նրանց իբրեւ իր զաղափարակից ընկերների եւ նրանց կորուստը մեծ ազէտ կարող էր լինել իր հողու համար ,նա գիտէր այդ բոլորը եւ չնայելով դրան, խրախուսում էր բոլորին, գտնելով, որ հայրենիքի ազատութեան սրբազան սեղանին դեռ եւս շատ սիրելիներ պիտի զոհաբերել... Դեռ աւելին, մի քանի տարի էր, որ նա ջերմագէս սիրում էր Իշխան Յովսէփ Արղութեանին եւ իր կեանքը կ'ուզէր կապել նրա հետ, սակայն զաղափարական աշխատանքները նրան կլանել էին ամբողջապէս եւ իր ներքին աշխարհի պահանջներին նա աշխատում էր կարեւորութիւն չտալ եւ, հակառակ նորա, որ իր սիրելին եւս կարեւոր դեր ունէր կատարելիք այդ արշաւանքի մէջ եւ զուցէ սպանուէր այնտեղ, այնուամենայնիւ Օրիորդ Սաթենիկը քաջաբար տարաւ այդ անջատումը եւ առանց արտաքին ցուցերի եւ յուզումների նա առնական կեցուածքով ճանապարհ ձգեց իր սիրելի էակին...

Արշաւանքը վերջացաւ. քաղաքական պայմանները այսպէս դասաւորուեցին Պարսկաստանում, որ արշաւանքին մնակցող բոլոր ընկերները անմիջապէս պիտի ցրուէին...

Ստիպուած վերադարձան Թիֆլիզ Օրիորդ Սաթենիկը եւ Յովսէփ Արղութեանը մի առ ժամանակ հանդստանալու եւ նորից վերադառնալու իրենց աշխատանքներին: Երկար տարեներ տեւող նրանց մտերմու-

թիւնը, որ արդէն սիրոյ էր վոխուել, վերջացաւ ամուսնութեամբ: Սակայն ռուս կառավարութիւնը, որ լաւ գիտէր, թէ Իշխան Արղութեանին եւ թէ Օրիորդ Մատինեանին, չը թողեց որ հանգստանան, եւ, իբրեւ վտանգաւոր եւ վնասակար տարրերի, աքսորեց նրանց:

Իշխան Արղութեանի համար առաջին անգամը չէր այդ աքսորը, դեռ եւս Դաշնակցութեան ծնունդի ժամանակն էր, որ նա աքսորւել էր Հաշտարխանի շրջանը եւ առաջին աքսորից նոր էր վերադարձել, երբ եկաւ Պարսկաստան Երւանդ Ղազարեան անունով, ուր մնաց եւ աշխատեց երկար տարիներ: Այդ էր երեւի պատճառը, որ այս անգամ աքսորւեցին նրանք Դուստատանի հիւսիսային հեռաւոր Վոլոգդա նահանգը մի քանի տարով...

Բնաւորութեամբ վճռական, անվախ ինչպէս քաջ տգամարդ, բուռն պայքարող իր համոզմունքների համար, հեռու կանացիական քնքուշ ձեւերից այդ կինը ամուսնանալուց յետոյ ամբողջովին նւիրւեց Իշխան Արղութեանին: Եղաւ նորա հարազատ ընկերակիցը նորա բոլոր աշխատանքների ժամանակ, նորա յոյժ թէ նեղ օրերին: Սակայն դրա հետ միասին կեանքի յարատեւ հոգսերը կարծես թուլացրին նրա մէջ նախկին եռանդը եւ նա այլեւս անկարող եղաւ նոյն նւիրումով անձնատուր լինել յեղափոխական աշխատանքներին...

***

Ընդհանուր պատերազմի օրեն էին...

Յոյսերի եւ ակնկալութիւնների նոր շրջան:

Ապագայ Հայաստանի երազը կարծես իրականանալու վերայ էր եւ հազարաւոր, տասնեակ հազարաւոր հայ երիտասարդներ քաջարար մեկնում էին ռազմադաշտ...:

Պատերազմի ահեղ կռիւներում ընկած հազարաւոր

հերոսներին փոխարինում էին նորերը նոյն ոգեւորութեամբ եւ խիզախութեամբ...

Իշխան Արղութեանը, հակառակ իր առաջացած տարիքին, ամբողջապէս նուիրւել էր կամաւորական շարժման... Նա եւս մի կազմակերպած բանակով պատրաստւում էր կուռ դաշտ ելնելու: Սաթենիկը թէպէտ լաւագոյն կերպով հասկանում էր թէ ուր է գնում իր սիրելին իր միակ նեցուկը, սակայն նա ոչ միայն չընդդիմացաւ այլ եւ արժանաւոր կնոջ պէս ներշնչեց եւ քաջալերեց Յովսէփի այդ ձեռնարկը եւ անվարան կերպով նրան կուռ դաշտ ուղարկեց, որովհետեւ համոզած էր, որ սրբազան արիւնով միայն պիտի ստեղծւէր Հայաստանը...

***

Վերջացաւ մեծ պատերազմը...

Անասելի քաոսի եւ խաւարի միջից ծնունդ առաւ Հայաստանի Հանրապետութիւնը...

Իշխան Արղութեանը դարձաւ Հայաստանի Հանրապետութեան առաջին դեսպանը եւ Տիկին Սաթենիկը առաջին դեսպանուհին այն Պարսկաստանում, ուր նրանք վեց-եօթ տարի մեծ նուիրումով աշխատել էին, ամէն մի վայրկեան սպառելով, թէ իրենց կարող են ձերբակալել կամ երկրից աքսորել... Թէ մէկը եւ թէ միւսը իրենց աշխատանքի արժանի վաստակն էին վայելում:

Սակայն Հայաստանի Հանրապետութիւնը դոհ ղընաց բոլշեւիկո-թրքական խաղերին եւ իշխան ու իշխանուհի Արղութեանները նորից վերցրին տարապրի ցուպը եւ հասան մինչեւ Փարիզ:

Փարիզում, իրենց ծերութեան օրերին կրեցին թշւառութեան եւ աղքատութեան դաժը բաժակը.

բայց մնացին միշտ հաւատարիմ իրենց նախկին գաղափարներին եւ միմեանց սիրող ազատներին նման մէկ մէկու յետեւից մտան գերեզման...

Շաւիլի շրջանի փոքրիկ գերեզմանատան մէջ բարձրանում է մի համեստ շիրիմ, այդ շիրիմի տակն է՝ որ հանգչում են երկու գաղափարակից ընկերները՝ Իշխան Յովսէփը եւ Իշխանուհի Սաթենիկը...

ՕԺԱՆԴԱԿ ԿԻՆ ՈՒԺԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Հ. Յ. Դաշնակցութիւնը այդքան խոշոր աշխատանքներ ունենալով Պարսկաստանում, բնականաբար պէտք է ունենար բազմաթիւ օժանդակ ուժեր, որոնց մէջ իրենց կարեւոր բաժինն են ունեցել կանայք, սակայն թւել բոլոր օժանդակ կին ուժերին նոյնպէս անկարելի է, որովհետեւ շատ են եղել դրանք, ոմանք նպաստել են փոխադրութեան եւ պահեստների դրծին, շատերը պատսպարել եւ խնամել են գաղափարական գործիչներին եւ մարտիկներին, օգտակար են եղել հանդանակութեան եւ այլն:

Հայրենիքի փրկութեան գաղափարը աստիճանաբար ժողովրդականանում էր եւ ամէն մէկը, դրանց մէջ լինելով եւ շատ համեստ դիրքի ու ընդունումների կանայք իրենց ուժերի չափ նպաստում էին ընդհանուր գործին...

Այդպիսի ուժերից էին օրիորդներ Փուպինեանը եւ Մարօ Մակարեանը, որոնք դաշնակցական գաղափարական օրիորդներ էին եւ Կովկասից անցել էին Պարսկաստան, զբաղւում էին ուսուցչութեամբ եւ իրենց ուժերի սահմաններում ամէն կերպ աշխատում էին օգտակար լինել Հ. Յ. Դաշնակութեան:

«ՍԱՌԱ ՄԱՅՐԻԿԸ»

Այդպէս էր կոչւում ուսուցչուհի Երանուհի Զոհրաբեանների մայրիկը, որ իր սեփական տունը ունէր Սալմաստի Հաւթվան գիւղում: 1892 թուականին, երբ Հ. Յ. Դաշնակցութեան գործերը Ատրպատականում բաւական ընդարձակուեցին, անհրաժեշտ համարուեց Սալմաստի շրջանում դանդաղ կայաններ հաստատել: Այդ նպատակով Նիկոլ-Դումանը Հաւթվան ուղարկեց Զոհրաբեան ամուսիններին, որպէսզի նրանք Հաւթվանում ուսուցչութեամբ զբաղուեն եւ իրենց սեփական տունը կայան դարձնեն Թաւրիզից եւ Երկրից եկած ընկերների համար:

Սառա մայրիկը, որ մեծ դուրդուրանք ունէր բոլոր ընկերների հանդէպ, լինէին նրանք մեծ թէ փոքր, կրթուած թէ հասարակ գիւղացի, իր դուռը լայն կերպով բացել էր բոլորի առջեւ: Նա հարազատ մօր քրոջուշ զգացումներով ընդունում էր բոլորին. տեղ էր տալիս նրանց հանգստանալու համար, կերակրում էր, լւանում եւ կարկատում էր նրանց հագուստները, եւ այդ բոլորը անում էր մեծ սրտացաւութեամբ եւ միանգամայն անշահախնդրութեամբ: Նա իրաւամբ մի դրթառատ եւ հայրենասէր կին էր եւ նրանց տունը Սալմաստի կարեւոր յեղափոխական օճախներից էր, ուր հայ յեղափոխականը զգում էր իրեն իր հայրենական տան մէջ...

Երբ Նիկոլ Դումանը փոխադրուեց Սալմաստի շրջանը եւ հաստատուեց իբրեւ ուսուցիչ Ղալասար գիւղում, ուսուցչութեան պաշտօնի հրաւիրեց Զոհրաբեան ամուսիններին, որոնց հետ միասին փոխադրուեց եւ Սառա մայրիկը, հաստատելով իր կայանը Ղալասար գիւղում, որը աւելի յարմար էր Հաւթվանից:

Նոյն եռանդով եւ նոյն սրտցաւութեամբ Սառամայրիկը շարունակեց խնամքի գործը...

Ղալասար գիւղը այդ ժամանակներից սկսած մինչեւ համաշխարհային պատերազմը մնաց Հ. Յ. Դաշնակցութեան կարեւոր կենտրոնավայրը:

Այսպիսի կայաններ շատ են եղել Պարսկաստանի զանազան վայրերում, որոնց բոլորի վերայ կանգ առնել անկարող ենք:

■■■

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք

Առաջին Հայ Յեղափոխական կինը

Թամարա Ադամեան–Ներսիսեան 8

Նատալիա Ամիրխանեան–Մուրադխանեան 19

Մարիամ Վարդանեան–Նազարբէկեան (Մարօ) 23

Հ. Յ. Դ. սկզբնական շրջանի կին գործիչները 39

Ժենիա Ադամեան–Բալանթարեան 40

Դարիա Գօլօշեան–Թադէոսեան 43

Մատինեան Քոյրեր 44

Օժանդակ կին ուժեր Պարսկաստանում 61

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԻՆ
Տ. ՄԱՍԷՆՍԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
Ա.ԿԱ.ԴԵՄԻՍ.

Copyright by the Author.

Printed in France.

Im. Araxes - 46, rue Richer, Paris

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0016220

-504.

ЦЕНА
II
10236
Մեկ օրինակ

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

Առաջին հատոր (սակաւաթիւ)

Եւրոպայից դուրս

ՆՈՐ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Թիւ 1· ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ 19ՐԴ ԴԱՐՈՒՄ 5 ֆր·

Եւրոպայից դուրս 7 ֆր·

Թիւ 2· ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅՈՒՀԻՆԵՐ, Առաջին մաս· ԳԻՆ 7 ՖՐԱՆՔ

Եւրոպայից դուրս 20 *Սէնթ*

«ՆՈՐ ՄԱՏԵՆԱՇԱՐ»-ի

Գրքոյկները ստանալու համար պէտք է դիմել·

Մոնմորանսի՝ *Տիկ· Հայկանուշ Գիւլխանդանեանին՝*

30, rue Lucien Perquel

Montmorency (S. et O.)

Փարիզ՝ *Պ· Լեւոն Գեւոնեանին, խմբ· Յառաջի*

17, rue Damesme

Paris (13°)

Մ· Պարսամեան Գրատունը

46, rue Richer, Paris (9°)

Պատրաստում է տպագրութեան համար

«ՆՈՐ ՄԱՏԵՆԱՇԱՐ»-ի ԹԻՒ 3Ը

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՅՈՒՀԻՆԵՐ» Երկրորդ մաս

Im. Araxes - 46, rue Richer, Paris